

213

Fhapter

891.99
S - 96

g r u p h

13 APR 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԵՎՐԵԱՆ
1897

1897

卷之三

卷之三

ARMENIAN LIBRARY OF HAVERHILL, MASS.

Դ Ի Ա Կ Ե Ր

U. U q b s b u. u h



Բ Ա Գ Ո Ւ 0 0 Վ Ա Կ Ս
ՏՊՈՐՎՆ Հ Ա Ր Ա Մ Ա Զ Դ Վ , 0 0 ՏԻՊՈԳՐԱՖԻՅԱ ԱՐԱՄԱԶԴՅԱ 1910 0 0 1910

00.09.2013
105 79A C

61.600

ԹԱՌԱՎԻՆԵՐ

I

213

Дозвол. цензур. 1910 г. 16 нояб.



27.9.57

Զատիկի կիւրակի էր. բնութիւնը զարթ-
նելով մարտի մարտային օրերից ու բաց-
ւելով մասախուղ և մըրիկներից, ողջունում
էր ապրիլի գալուստը. ցրտից հեռու հե-
ռու երկիրներ աքսորված ծիծառները վե-
րադառնալով աւետում էին գարնան գա-
լուստը ու հիւրասիրւում հիւրընկալ Ար-
ցախում։ Մահաշունչ քամուց ու ձիւնի
հաստ շերտերից վաստակած սարերն ու
պարտէզները սկսել էին բացւել. դաշտերն
ու այգիները կանաչում էին զարդարելով
Ղարաբաղի հինգ ամսեայ մերկութիւնը.

Շուշայ գաւառի Խ գիւղի բնակիչնե-
րը չկորցնելով իրենց պապական սո-
վորութիւնը դափ ու զուռնով գուրս գա-
լով գիւղից մօտիկ այն այգիները, որտեղ
լինում էին ամեն տարի Զատիկի կիւրակի օրը,
երկու սեռի խառնի խուռն ամբոխը ողջու-

նում էին գարնան գալուստը, իրար հանդիպելիս ասելով «պարի գարուն» լինի:

Մանուկները անգիր արած բարի գարուն խօսքը խումբ-խումբ վազվելով ցողապատ խոտերով ու երկար արտասանելուց կիսայոդնած արագ-արագ պատմում էին ամեն մի հանդիպողին էլ ասլով մասն ասելով «հայ պարի գարուն լինի հա, հայ պարի գարուն լինի. պարի գարուն»:

Թաղ-առ-թաղ զատ-զատ խմբակներ կազմելով երգմամ, պարմամ, «ք ե փ» անելով ողջունում էին «պարի» գարնան գալուստը . . .

Կատարեալ գարուն էր, բարի գարուն, գարուն բնութեան բացման, գարուն սիրելի ծիծեռնակների երամակներով վերադարձան, և գարնան ընդհանուր իրականութեան խնդութեան ու դւարձութեան, և գարուն ալվանահիւս ծաղիկներով զարդարման այն չոր բլուրների ու տունկերի, որոնց վրայից յորդ ու պղտոր հոռամքը անցնելով ճեխքել, թողել էր անարդար գծեր ու կայծակներից պատառոււած բաւականին մասնիկներ սիրուն ու պտղատուծառերից:

Ամբողջ օրը անցկացնելով ուլուսութեամբ ու դւարձութեամբ, արդէն իրիկ-

նադէմին վերադառնում էին գիւղ բոլոր քէփաւորները խառնելով դափի, կէցցէփ, երգի ու երբեմն-երբեմն և ատրճանակների ձախները իրար: Յ—եանը դուրս գալով իրենց բակից նայում էր ուրախ թափորին: Միայն նա էր միակ երիտասարդը գիւղում, որ չէր գնացել դիմաւորելու գարնան գալստեան, ու Սօնայի հետ մնալով տանը սովորեցնում էր նրան դըրել ու կարդալը

Նա ստանալով միջնակարգ կըթութիւնը քաղաքում ու սովորած լինելով քաղաքի նիստ ու կացին, այժմ վերադարձել էր գիւղը ծնողների մօտ ու ուզում էր հայրենիքում ու հայրենի խրճիթում անցկացնել Զատիկը: Նրա ծնողներն իրենց որդու համար նշանել էին 14 ամեայ գեղեցիկ Սօնային, որ որդու սիրուը «յետ լինի», գէպի գիւղը ու քաղաքին սովորելով չմոռանայ իրենց:

Յ—եանը ամբողջ օրը Սօնայի հետ տանը մնալով այժմ դուրս էր եկել, քըննում էր գիւղի սովորութիւնները նայելով եկողներին: Ինչքան ինդքել էին նրա ծընողները, նա չէր գնացել քէփի, և վերջապէս ծնողները համոզւել էին, որ գուցէ

Սօնայի համար չի գալիս, որոնց տանը հիւանդ լինելու պատճառով Սօնանք քէփի չէին գնացել, ու մտածել էին Մ—ին թողնել այդ օրը Սօնային մօտ, որ Սօնան կովկասի լեռներում սարերի բնութիւնից ստացած՝ իր գեղեցկութեամբ, ու օրիորդին յատուկ ժպիտներով աւելի բորբոքէ նորա միտքն ու սիրոը, որ նա միանդամայն մոռանայ քաղաքի ապագան:

Յ—եանի ուրախութեանը չափ չկար, երբ նա տեսնում էր, որ իւր հայրենի զիւզացիները բոլորը ուրախ-ուրախ վերագառնալով բնութեան լարերին էին տալիս իւրենց երգերը, տաղենս ու կատակները, բայց մէկ էլ մոլորում էր որ ինքն էլ չի իւր ընկերների հետ մի խմբում, և մէկ էլ ժպտում, երբ տեսնում էր գեղեցիկ Սօնային իբրև ընկեր՝ իւր մօտը իրենից անբաժան, նոքա հարմացու ու փեսայ, զիտում էին զիւզը վերագարձող ուրախ-ուրախ թափորին, որոնց տուաջը տանում էին մի քանի նոյն օրը վերագարձած ծիծնանակներ, որոնք զիւզացոց գտնելով ուրախ պըրութիւնում, իրենք էլ նոյց ուրախութիւններին մասնակից լինելու համար վայրեանապէս՝ երբեմն բարձրանում էին երկնք, երբեմն նետում յառաջ ու մէկ էլ

յետ գառնալով գետնի երեսով՝ համբուրելով նորա բոյսի խոտերի զագաթները անցնում զիւզացիներից շատ մօտիկով կարծես նոյց պարզ ցոյց տալու՝ որ մենք ծիտ կամ ուրիշ թռչուն չենք՝ այլ աւետաբնը ծիծնանակներ . . .

Երկու սեռի ժաղովուրդը օդը թնդացնելով անցնում էին զատ-զատ խմբերով, երիտասարդները մի, կանայք ու աղջիկները մի այլ կողմով

Ով որ չէր գնացել զիւզից դուրս, այժմ գուրս գալով անից, թամաշայ էին անում եկողներին, նոյնիսկ ծերերը գուրս գալով ու նայելով եկողներին, յիշում էին իրենց անցեալը ու անիծում ծերութիւնը անուանելով նրան վաղահաս տանջանք:

Բոլոր թամաշաւորները ուշք դարձրին զէպի եկող մի խմբակ, որտեղ հինգ մարդ նստած մի ձի ունեցող սայլում, ու բոլորը արբած զանազան կատակներով ու հայհոյանքներով անցնում էին զիւզի միջով։ Սայլակը հասնելով Յ—եանի ուղղութիւնը ու շարունակելով իւր բղաւումները անցնում էր։

Սօնան սայլակի միջի արբած մարդկանցը ճանաչելով թէ ինչ մարդիկ են նոքա, սիրտը թըրըմփ-թըրմփում էր, որ մի

գուցէ մեղ մի անբարոյական բան ասեն,
այսքան բազմութեան ներկայութեամբ,
այն էլ հարսնացու ու փեսայ իրար ներ-
կայութեամբ, և ուզում էր իմաց տալ Զ—
եանին որ լաւ մարդիկ չեն այդ խմբակն,
ու գնան առն դոցա ներկայութիւնից
բայց չէր համարձակւում խօսելու:

Յ—եանը տեսնելով Սօնայի անհան-
գստութիւնը ու նորա հայացքից իմանալով
նորա միտքը, հանգստացրոց նորան բնաւ-
չը նայելով դէպ սայլակի միջի խմբակն, որ
նոքա էլ իրենց չը նայեն ու հետները խօ-
սեն: Բայց արբած խմբակն նկատելով նո-
ցա—սկսեցին ծիծաղոտել, հրհուալ ու հայ-
նոյել . . . : Որը գոռում էր ասելով «Քօ
չեն էլ ամաչում ու երկուսը իր ար
հետ կան գնել են մարդկանց մօտը»,
որն ասում էր՝ «կարդացածին նայեցէր—
հէյ յուշտ», որը մի ուրիշ սպանիչ խօսք՝ և
այլն:

Նա ուզում էր գնալ մտնել տուն, որ-
պէսզի չը տեսնէ դոցա, բայց մէկ էլ յա-
մառելով զսպ ու մ էր իրեն մտածե-
լով որ գնալուց բոլորը կը համարեն իրեն
անզօր. բայց նորա սիրաը բորբոքւում
ու ալեկոծւում էր այն ամեն մի խօսքից,
որ նա լում էր այդ խմբակից, մանաւանդ

էրք որ այդ խօսքը ուղղւած էր լինում
Սօնային, որն միամիտ ու անմեղ կանգնած
էր իր մօսն:

Սայլակը գեռ բոլորովին չէր հեռացել,
երբ նրա մէջ նստածներից Պ Ապրես-
եանը կանգնելով սայլակի մէջը սկսեց
բարձրածայն կիսաբզաւ եղանակով երգել
ինքնահնար երգը . . . :

Սօնան իմ եար ինի
Այս գիշէր իմ... ինի...

Եւ ուզում էր շարունակել, բայց
խմբից մէկը նրան զսպելով նստացրեց, ու
սայլակը անցաւ:

Երգը լսեցին Յ—եանը և Սօնան, ինչ-
պէս և լսեցին բոլոր թամաշաւորները, ու
նայեցին դէպ ամօթից ներքուստ ալեկոծւող
խել արտաքուստ ամօթախծութիւնից գոյնա-
փոխ եղած երիտասարդները:

Յ—եանը գոյն-գոյն փոխւելով մի բա-
նի անգամ նայեց դէպ անցնող սայլակը,
և դէպի ներկայ եղողները, ու երբ նայում
էր դէպի Սօնան, նա արդէն արձակում էր
այնպիսի մի թառանչ, որից Յ—եանը ի-
մացաւ որ Սօնայի սիրան էլ նոյնպէս բոր-
բոքւում է այդ խօսքերից—ինքչպէս իրե-
նը, ու այդ արդար թառանչով զովացնում
էր թէ իր այրւող սիրան, ու թէ ատում

ներկայ եղողներին նոցա ներկայ լինելու համար, ու թէ պատասխանում զգւելի խմբակին այդ թառանչով:

Յ—եանը այլիս չկարողացաւ սպասել ու Սօնային նշան արեց, որ հետեւէ իրեն:

Նոքա մտնում են տունը, բայց Զ—եանի սիրտը ալեկոծւում էր թունաւոր խօսքերից, ու նա ինքն իրեն և անզօր էր զգում այն թառանչի առջև, որ Սօնան արձակելով դժգոհութիւն էր յայտնում իրեն թէ ինչու չես վրէժինդիր լինում:

Տուն մանելուն պէս նո վերցրեց իր արկղից մի բան Սօնայից աննկատելի կերպով՝ ու դուրս գալով Սօնային առեց— «սպասիր մինչեւ գալս»: Սօնան շուտարւած կանգնել էր տանը, ու աչքերը չըսել գետնին, ու երկար ժամանակ նայում էր այդպէս: Քանի ըսպէից յետոյ Ապրեսեանի տան մօտը լավեց ատրճանակի մի որոտում:

Սօնան ոչինչ չհասկանալով պայմումից, ու կարծելով թէ թափորիցն է, մենամարտում էր իր ներքին նորատաց վրշտերի հետ:

Իսկոյն ներս մանելով Յ—եանը վայր-

կեանապէս գրկեց Սօնային, ու իսկոյն նորա ճերմակ գագաթին զրօշմելով իւր առաջին և վերջին համբաւին, ու «մնաք բարեամու», ասելով շատպով անից դուրս եկաւ . . :

Սօնան կատարեալ ապուշ էր:

Նա առաջ չիմացաւ թէ ինչ է կատարեւում իւր շուրջը, ապա տեսնելով Զ—եանի «մաք բարեկի համբոյլը», ու զից հետեւիլ նորան, բայց նա արդէն հեռացել էր:

Իսկոյն դիւզում գագարեց դափ ու զուանի կէցցէի ձայները, ու սկսեց աղազակ—հարայ ու հրացի, «բոնեցէք» ու հրացանների տննպատակ տրաք—տըր տք ոցը:

Մութը ընկաւ:

Ամբովար սկսեց որոնել այդիները ու մարագները. բայց ոչինչ չճարւեց: Զ—եանը մթութիւնից օգտւելով փախել ու մտել էր գիւղից քիչ հետու գանւող «Ծակքար» կոչւած քարէ անդունդը, ու այդ տեղից նայում էր գէպի գիւղը, գէպի այդ նույիրական ծնող, ու թշնամի խրճիթները:

Մի քանի ըսպէներ առաջ այդ եռող գիւղը այժմ խարխափում էր թանձր խարի ճիրաններում, ու ոչինչ այնտեղ ու

բոշ չէր նկատում: Յանկարծ տեսաւ նա
մի կրակ վառւած դուրս է գալիս զիւղից,
ու նա կարծում էր այդ ճրագաւորը Սօ-
նան է, ու կը գտնի իրեն:

Ճրագը զիւղի շուրջը գանւող խիս այ-
դիներում մերթ — երեսում էր, ու մերթ
անյայտանում, ու բոլոր ժամանակ նա
լուռ նայում էր գէպի այդ մերթ մթնող և
մերթ լուսաւորւող զառիվայր կողմը, — ուր
մի քանի բոպէ չքանալուց յետոյ՝ կրկին ե-
րեսում էր ճրագը վարդագոյն — ջինջ լոյ-
սով:

Ճրագը մի քանի բոպէով կանգնեց,
ու նա աշխատում էր մի բան նկատել ճր-
ագի շուրջը, բայց թանձր խաւարը թոյ
չէր տալիս: Նա անգնդում մտածում էր՝ թէ
չիցէ նա Սօնան է, ու ինձ փնտրելով
ուզում է յետ տալ մատանիս ու տւած
համբոյրս, և ուզում էր գուրս զալ ու
մօտենալ կանգնած ճրագին, բայց երբ մէկ
էլ յիշում էր մի քանի ժամ առաջ խւր
յետից տեսող զնդակների որոտումը, աւե-
լի էր նետում գէպի անգունդի խորքը:

Խսկոյն փոքրիկ ճրագը վառելով մեծ
լոյսով լուսաւորեց ամբողջ զիւղը:

Նա ոչինչ չէր հասկանում, ու կար-
ծում էր թէ այդ բոլորը բնական երեսյ-

ներ են, ու միշտ զիւղումը լինում են
այդպիսի լուսաւորներ զիւղը լուսաւորելու
համար, բայց երբ տեսաւ որ վառւածը ի-
րենց մարագն է, որտեղ չէր ուզեցել թագ-
ներ, ու շուրջը կանգնած են զինւած
մարդիկ, հասկացաւ որ ոչ, գեռ բոլորը
չեն քնիլ, ու իրեն գեռ փնտրողներ կան,
որոնք կարծելով թէ իրենց մարագումը կը
լինի թագնւած, հրդեհել էին նորան, որ
դուրս գայ մարագից, ու խփեն զնդակով:
Մի քանի բոպէից յետոյ մարագը հալւեց
հրեղէն լեզուներից, ու կրկին զիւղումը
տիրեց խաւարը:

Կրկին հրդէհի մայր փոքրիկ ճրագը
մերթ-ընդ-մերթ երեկելով յետ զնաց զիւղը,
ու այլ ևս չերեւեցաւ յաւիտեան:

Յ—եանը միշտ նայում էր գէպի զիւ-
ղը, որ տեսնի մի ճրագաւոր, ու մտածէ
թէ գա Սօնան կը լինի, ու փարատէ կիզիչ
վշտերը, բայց ոչինչ չէր երեսում:

Նա անհուն մտքերով պաշարւած մը-
տածում էր, մտածում, ու չզիտէր թէ
ինչ է մտածում, ուր զնար:

Յանկարծ անգունդի դռանը երեացին
չորս փոքրիկ ճրագներ, մի անգամից վառ-
ւելով, ու այս ու այն կողմը անցնելով:

Նա սարսափելով չզիտէր ինչ աներ,

ու երբեմն-երբեմն ասորձանակը ուղղելով
դէպ ճրագները մէկ էլ յետ էր քաշում,
ինչու ճրագները մէկը չէ, որ նա կարծէ
թէ Սօնան է, և ոչ թէ թշնամիները,—ա-
հա ինչն էր նրան կատաղեցնում, ու ին-
չու էր նա զիմում՝ ասորձանակին, չիմա-
նալով որ ոչ առաջին մտածածն է, ոչ էլ
երկրորդ:

Նա ինքն իրենից սարսափում էր զի-
տելով ասորձանակը, որ մի քանի ժամ ա-
ռաջ վերջ էր տւել մի մարդու կեանքին,
ու երբ նայում էր դէպի մահաբեր ճրագ-
ները:

Իսկոյն ճրագների մօտից բարձրացաւ շան
ձայնի նման մի տևողական աղաղակ, ու
նա կարծեց թէ իրենց շունն է տեսնելով
իւր ափրոջ կրիտիկական դրութիւնը, յետե-
ւ էր իրեն:

Բայց աչ, այդ էլ չէր, ու ջուխտ գայլեր վեր-
ջացնելով քաղցածութիւնից ծագող ոռնո-
ցը, իրար ժանիքանարելով հեռացան տա-
նելով կենդանի փոքրիկ ճրագները:

Գայլերի գնալուց յետոյ նա իւր ուշ-
դրութիւնը լարել էր դէպի բիւրաճրագ-
տիեզերքը, որոնք իրենց վառ ու անան-
ցանելի աստղեան ճրագներով շառ նման

էին այն առաջին ճրագին, որ նա կարծում
էր թէ Սօնան է:

Երկնքի ճրագները բիւրաւոր էին, ու
անշարժ, միայն երբեմն-երբեմն նրանցից
մէկն անցնելով թողնում էր երկար գիծ
իր ընկերներին ասելով «մնաք բարեւ»,
ինչպէս ինքն էլ Սօնային էր ասել: Նա
ամեն մի աստղ անցնելով մտածում էր
թէ այդ անցնող աստղը իրենն է, ու ան-
ցաւ, ինչպէս ինքն անցաւ իր Սօնա-
յից . . . :

Նա միշտ նայում էր դէպի երկինքը,
ու նրա ճրագները, մինչև որ հեռո՛ւ հորի-
զոնում երեւեցաւ մի վառ աստղ, ու նո-
րա սիրան կրկին հասաւ Սօնային:

Նա նայում էր միշտ դէպի այն աստ-
ղը ու կարծում որ դա անպատճառ Սօ-
նան կլինի:

Չէ որ Սօնի պէս վառ է ամբողջ եր-
կնքում, ինչպէս Սօնան վառ է ամբողջ
զիւզումը, միակը լինելով:

Բայց աւազ, իսկոյն այս վառ ճրագն
էլ իր ժամանակին անցաւ, երկնքի կապ-
տագոյն շերտն, ու կրկին տիրեցրեց
Յ—եանին:

Չէ որ նա թաքուն էր գալիս, ու պի-
տի միայն և միայն Սօնան լինէր, ախր

Ինչպէս բարձրացաւ նա երկինք, միթէ նա
ինձ երկնքումն է փնտրում մտածում
էր նա:


Զէ, Զէ, նա էլ չէ Սօնան . . . Սօ-
նան ինձ բոլորովին մոռացաւ, ու չի էլ
մտածում իմ մասին, այլ նա լոյս աստղն
է, մեր զիւղի սարիցն բարձրանալով եր-
կինք,—աւետում է ճամբորդներին ճամբի
ելնելու,—մտածեց նա, ու գուրս գալով
անդունդից հեռացաւ լուս քայլելով:
Նա գնում էր, ու երբեմն-երբեմն յետ նո-
յում, կարծելով թէ մի գուցէ դաշիս լինի
Սօնան, սակայն ոչ ոք չէր երեւում, ու նա
համոզեց որ Սօնան իրեն մոռացել է բո-
լորովին, ու այժմ մտածում է մի ուրիշ
վեսացւի մասին, ու առանց յետ նայելու
շարունակեց ճանապարհը, ինքն էլ չի-
մանալով թէ ուր պիտի երթայ:

|||

Երկը բաւականին բարձրացել էր: Եր-
կար թափորն ուղղւած գարնան գալստ-
եան՝ բերել էր իւր առաջին ոսկեզօծ օրը:
Ամեն մարդ գնում էր դաշտ՝ ողջունելու

նորա գարունը գործով: Միայն Յ եանն
էր որ վախենալով ցերեկով շարունակելու
անորոշ ճանապարհը, որ կարող էին նկա-
տել իրեն որոնողները, —մտել էր Յ. շնի
մօտ գտնւող անտառը, և սպասում էր
գարնան առաջին օրւան մթնանալուն: Նա
քաղաքած էր յոդնած, և բաւականին ան-
քուն: Թփերի միջից նայում էր այս զիւ-
ղին ու տեսնում խաղաղ առանց արբած
մարդկանց, ու հրացանաձգութեան, ու նա-
խանձում էր, որ այդ չէ իրենց զիւղը:
Նա նայում էր միշտ զէպի զիւղը, ու միշտ
յիշում իրենցը, և ամեն մի օրիորդ կամ
կին այնտեղ տեսնելով մտաբերում էր Սօ-
նային, ու նրան միւս օրւան սովորեցրած
դասն, ու երեկուան դրօշմած անջատման
քաղցր—բայց գառն ապագայ գուշակող համ-
բոյրը:

Յանկարծ նա բոլորովին թողեց զիւ-
ղին նայելը, ու զարմացած նայեց զէպի
իւր ճախ կողմում լսող ճայնը խիստ վա-
խեցած: Նա դողդողալով առանց տեղից
շարժւելու նայեց, ու տեսաւ երկու օր-
իորդների, որոնք քաղում էին ծաղիկներ:
Նա իրեն բոլորովին ժողովեց ու թաք կա-
ցաւ, որ չնկատի ու ուղարկուի ու յոդնա-
ծութիւնը մոռակարգ սկսեց լսու գննել օր-



իորդներին, որոնք մօտենում էին գէպի նորս կողմին, ու նա գորանց նայելով հիանում էր այդ ջատկին ջատկի ձևի պէս զարդարւած ծաղկաբաղ աղջիկներով, ու բառմ նոցտ խօսակցութիւնը։ Նոցանից ամեն մէկը մի-մի փունջ մանուշակ ու վարդ խառն փնջելով կախել էին իրենց զիւակների ծայրից, ու գիսակներն ուղղել գէպի իրանների կողմը։

Յ—եանը տեսնելով այս նոր Սօնաները, ամեն ինչ մոռանում էր ինչ անցրել էր միւս օրն, ու ընկել դադարդիւն բոլորովին հիանալով այդ դալարագուարթ վարդերով։ Նա ինքն իւր վերան գայրանում էր բոպէտապէս փոխւելով, երբ յիշում էր որ ինքը պատճառ եղաւ թողնելու զոցանից ոչ պակաս իւր Սօնային, անբախտացնելով նրան ու արեամբ զրօշմելով նորանշանը, և մէկ էլ հպարտանում ինքն իրեն հարց տալով թէ «թէկուզ արի այդ բուրը, բայց չմնացի Սօնայի առջեւ անզօր, ու չթողի առանց վարձատրութեան նորաայն թառանչն, որ չէր մոռացւիլ ամբողջ մեր ամուսնական դարում։

Յանկարծ նա մոռանալով ամեն մի միաք ու զարմացած ուշողրութեամբ ըս-

կսեց նայել գէպի օրիորդները, որոնք այժմ գտնուում էին զրամայում։

Օրիորդները անտառում թէկուզ գիւղից այնքան էլ ոչ հեռու, բայց անտառի խիտ տեղն ընկնելով, ու Յ---եանին շատ մօտենալով կտնդնել էին, ու սկսել քաղցր զրոյց։ Նոքտ իրար հետ խօսելիս իրար անուն էին տալիս, ու իրար տառւմ էին — «աղջի»։

Նոցանից մէկը միւսին դառնալով աւաց, — «աղջի պա էտ «կնչկարմիր» կարած Սըշակը հիբան կեալու զարիբութիւնից», (օտարութիւնից)։

— Էյ, ինչ զիդամ, ասըմքն թա՞ էս աշշունքը կամկանայ — պատասխանեց միւսը պլուխը դժգոհօրէն շարժելով։

— Ներակ քեզ, — տասց հարց տւողը, շարժւելով գէպի մի վարդի թուփ։

— Էլ ինչ ներակ, հալա որչանք վախտ (ժամանակ) կտ չքորը (մինչե) նւաասարպը։ Մշունք (այբան) սպասալըմ աշկո ճիւր ա կարած — տասց միւսն, ու ինքն էլ շարժւեց գէպի մի այլ վարդի թուփ։

Նոքտ այսպիսի խօսքերք ուղղելով իրար քաղում էին ծաղիները։

Ինչպէս կը նկատի ընթերցողը, աղջիկներից մէկը նշանուած էր ու սպասում

Եր իր փէսացուին օտարութիւնից Նաւասարդին վերագառնալուն:

Յ—Եանը լսելով այսպիսի խօսքեր կըր-
իին պաշարւեց անհուն մտքերով: Նա մը-
տածում էր Սօնայի մասին կրկին՝ թէ նա
էլ ինձ համար կլինէր սպասում, ու ինձ
«կանաչ-կարմիր» ասել ատլիս իւր ընկե-
րուհիներին, եթէ երէկ գործած չը լինէի
այնպիսի ոճրագործութիւն, ու գնալիս
լինէի ուսումս վերջացնելու: Բայց մոռա-
նալով ոչնչացան այդ բոլոր ցնորսամիտ
մտքերը, երբ յանկարծ տեսաւ, որ ոչ նը-
շանւած աղջիկը մօտենալով նշանւածին,
ու չորս կողմը նայելով ասաց,— աղջի էս-
տեղ ոչոնք չկայ որ մեզ տեսնի, պէք մի-
անգամ պաշեմ Արշակի անուանից, սիրալդ
հովանայ:

Նոքա այս ու այն կողմն նայելով զըր-
կախառնեցին . . .

Յ—Եանի երակները այժմ սկսեցին
եփւել, ու նա սկսեց կատաղի կոիւ իր
գէմ իր արեամբ պատերազմելով . . . բայց
աւազ, դեռ օրիորդները լիովին չէին վեր-
ջացրել իրենց համբոյըները, ու կշացել
այլաւանունեան համբոյըներից, երբ յան-
կարծ նա սարսափից տեսնելով երկու հարս-

ու փէսայ օրիորդներին իրարից բռնի բա-
ժանում . . . :

Ոչ նշանւած օրիորդին նա չտեսաւ
թէ ինչպէս հեռացաւ, իսկ նշանւածն երբ
ուզեց ձչալ, իսկոյն նրան բռնողը, որ հա-
զել էր ալխալուղ՝ աստանին շուռ տւած,
ու երեսին տեղահեղ ցեխ քսած, զրպանից
հանելով կեղաստ թաշկինակը, որի մի մա-
սըն ունէր ձեռների առատ կեղա, իսկ միւս
մասն արեան, որ ինչպէս երեսում էր մի-
ջին միս էր փաթաթել, իսկոյն կոփուց օր-
իորդի բերանը:

Նա ուզում էր բռնաբարել ծաղկաքաղ
ու կանանչ կարմիր երազ նշանւած աղջկա-
նը, ցեխստ երեսով . . . :

Իսկոյն միւս օրւան սաթայէլական
մտքերը պաշարեցին Յ—Եանին, ու նա ի-
մանալով թէ բռնաբարողները թուրքեր են,
որովհետեւ կեղծ շորերով շատ էին նման-
ւում թուրքերի, ատրճանակը հանելով
գուրս եկաւ թափսատեղից, ու մի գնդա-
կով գետին զլորեց այս զազեկի մարդուն
ու երկրորդ գնդակով սպանեց նրա զազան
ընկերոջն:

Երկու ընկերները ընկած արիւնաբու-
թաւալում էին մի քանի բողէ առաջ ծա-

զիկներ տւող թփերը ներկելով արիւնով:

Աղջիկները ուշքի գալով, բայց ապրձանակի սրոտամի ու դիակների սարսափից կանգնել էին լուր, ինչպէս արձան, իսկ լեզուները որ մի քանի բովէ առաջ մարգարիտ էին թափում, այժմ կատարեալ պապանձել էին:

Աղջիկները զուցէ կաթւածահար լինէցին, եթէ Յ—եանը ատրճանակը ծածկելով շուտ չխօսէր ասելով «Ճի վախիք, ես ձեզ եղբայր եմ, ու սկսեց մօտենալ դէպի նոցա, մտածելով որ իր փրկած զոհերը իրան կը տան քիչ հաց քաղցն յաղացնելու, Բայց աղջիկը բը ճշալով վտխան դէպի վիւզը թողնելով ազատիչին քաղցած։ Նա, որ ուղում էր պարզ երեսով ու բարութեան ժպիտով մօտենալ ու հաց ստանալ փրկւած օրիորդներից, սկսեց ինքն էլ փախչել ինքն իրենից կրկին նեղանալով, ու ինքն իրենից գանգատւելով, որ չկարուդացաւ շնորհիւ իր կոպտութեան, աղջիկներին փրկել մի այլ պարագայով ու արժանանալ նոցանից շնորհակալութեան ու ուտելու հացի։

Մի քանի բովէից յետոյ ամբողջ զիւդացիք թափւել էին դիակների շուրջը, ու

սպանուածների երեսների ցեխերն մաքրելով ու շորները երեսներին շուռ տալով, առասն որ երկուսն էլ իրենց զիւդացի են, ու մէկը ոչ նշանւած աղջկան բաժանւած հօրեղբայր Գալուստը, իսկ միւսը զիւդի մսագործ Սողոմոնը, որոնք ուղիղ այնպէս ինչպէս Յ—եանը, զարանից նկատելով երկու աղջիկներին վարդի թփերում, մարդկանց զերերում, անցնելով մարդկային համբերութիւնից և փոխւելով կատարեալ կենդանուն, սկսել էին մօտենալ նոցապատւին, անձանաչելի ու ցեխոս երեսներով։

III

Թէ ո՞ւր գնաց Յ—եանը, —ոչ ոքից յայտնի չէր։ Ոչ ոք չկարողացաւ մի տեղեկութիւն տալ նորա անբախտ ծնողներին, որդու ուր լինելու մասին։ Իսկ Ապրեսեանը, որն սպանուել էր նորանից, չունէր մի այնպիսի բարեկամ, որ ման գար ու ճարէր նորան։ Յ—եանի մասին զիւդում ասում էին թէ, իբր նա անցած կինի Պարուկաստան։ Իսկ քաղաքի ծանօթներից ոմաքն

ասում էին թէ նա միշտ մտածում էր մի որևէ է աղբիւրից նիւթապէս ապահովուել, ու շարունակել ուսումն, իսկ ոմանք էլ թէ նա միշտ մոլորում էր, երբ մի որևէ է սպա ձիռ վրայ նստած անցնում էր քաղաքի փողոցով զինորների գունդը տաճնելիս իր յետելցը երգել տալով, ու ասում էր որ ես օփիցէր պիտի լինեմ:

Դժբախտ հայրը չգիտէր ո՛ւր գնար, ոչ Պարսկաստան գնալու ոյժ ունէր, ոչ էլ Թուսաստան շրջելու կարսղութիւն, և մանաւանդ երբ կարծիքներն էլ տարբեր էին, և նա յոյսը չէր կորցնում ու մտածում էր, որ իր որդին ուր էլ որ լինի կը միխթարէ իրեն գէթ նամակով յայտնելու ողջ լինեն:

Սակայն անցան օրեր, ամիսներ, ու ոչինչ չկար, և տարիները գոլորելով անցան իրար յետելց, ու իրենք հաշւեցին Մին կորած:

ՏՎԾ

Յ—եանի անյայտանալուց յետոյ թէ քանի տարի էր անցել, զբա ձիշտ թիւը իմացող չկար: Ասողներ կային թէ տասն

և ութ տարի է անցել, կային և ասսղներ թէ քսան տարի է անցել, ինչպէս կային և քսանը հինգ տարի ասողներ: Ոչ ոք ուղիղ թիւը չգիտէր: Միայն Սօնան էր, որ իր հինգ մատի պէս գիտէր անցած տարիները: Նա շատ սուդ պահեց իւր սիրելիի անհետանալուց յետոյ ու շատ ու շատ լաց եղաւ, լաց էր լինում մանաւանդ, երբ ասում էին թէ «անբախտ» ես, «վէրադ անձք» կայ և այն:

Նորա ծնողները տարի ու կէսից յետոյ շահսահամեան պսակ տւին նըան պըսակելով մի տղի հետ, որ երկար մնացել էր օտարութիւնում ու ամեն կողմերով պակաս չէր մնացել քաղաքի ապականութիւնւց ու շոայլ և անառակ կեանքից, օրուայ աշխատածը ծախսելով զինեաներում, ու թուղթ խաղալով, որը չկարողացաւ աղբեկու առանց քաղաքի: Նա երեք ամսից յետոյ կրկն գնաց Սօնային սնծանօթ հորիզոններ շրջելու, ու վերադարձաւ միայն երեք տարուց յետոյ այն էլ դադարկաձեռն ու հիւանդ:

Սօնան անբախտ մնաց և զաւակի կողմից, երեխայ չը ծնելով իւր ամբողջ կեանքում, ու միշտ տրանջում էր տա-

Առկ՝ «Աստուած ինձ անբախտ է ստեղծել»:

Մի օր կիւրակի էր, Զատիկի կիւրակի. ուղիղ 19-րդ, 190 թվի զատիկ կիւրակին. այն օրից, երբ Յ—եանը անհետացել էր: Ամբողջ գիւղը իւր սովորական տեղը տօնում էր թափորն: Գիւղում միայն մնացել էին ծերերը:

Այն օրուանից, երբ պատահեց գրժարդ անցը, Յ—եանի ծնողները ուխտեցին էլ չտօնելու գարնան գալուստը, ու տեսնելու արինու ապրիլը . . . Դոցաբնիերակցում էր և Սօնան, որ աւելի խորն էր ուխտել չգնալու այն այդիները, որտեղից եկողները գագարգիւն էին զցել իւր ուսուցիչ նշանածին, վիստացուին: Երբ համնում էր ամեն տարի յիշեալ օրը ու բոլոր գիւղացիները գնում էին քէփի, Յ—եանի ծնողներն ու Սօնան գնում էին փոխարձաբար միմեանց աները ու այդպիսով անցկացնում այդ օրը, որը բոլորի համար մի «մեղք» բայց իրենց համար «լեզի» օր էր:

Այսպիսի մի մեղք ու լեզի օր էր:

Ամենքը գիմաւորում էին գարնան գալուստը: Սօնան նստած էր Յ—եանի ծնողների տանը, որ հայրը միայն կենդանի էր,

իսկ մայրը՝ ոչ, որն չէր կարողացել տանելու գժբաղդ ցաւն ու որդու անհետանաւուց չորս տարի յետոյ մտել էր գերեզման, ընդմիշտ մոռանալու ծնողական վշտերը:

Յանկարծ մտաւ գիւղի գղիրը, որ ամեն կիւրակի գնում էր Ծուշուց գիւղի հասցէին եկած պոստը բերելու, ու Յ—եանի ծերունի հօրը տւաւ մի ծրարի ձեւ ունեցող կապոց, ասելով՝ ձեր հասցէին է եկած: Ծերունին գարմացաւ տեսնելով կապոցն, ու չէր ուզում բանալ ասելով՝ ով ունիմ որ ինձ համար բան ուղարկի: Բայց գղիրը համոզեց նրան ասելով, որ թէկուզ չնշւած է ուղարկւած պոստացին կընիփի այն մասը, որ պիտի ցոյց տար ուղարկւած քաղաքի անունը, բայց հասցէն ձեր հասցէին է, պէտք է որ ձերը լինի:

Ծերունին ուզում էր բանալ կապոցն, բայց յանկարծ մէկ էլ վայր դրաւ երբ դողդողացին ձեռները, ու առաց «այստեղ խաթայ» կայ:

Գղիրը բացեց կապոցը, որից գուրս եկաւ մի լուսանկար քաշւած մի զինուրական (պողպողկովնիկ) իր երկու տղաւ ու մի աղջիկ երեխորց ու կնոջ հետ ու մի կարմիր թուխտ, Ծերունին ու գղիրը մընացին երկար նայելիս, ոչինչ չհասկա-

Նալով ոչ պատկերից, ոչ էլ կարմիր թըղթից, որովհետև առաջին անգամն էր որ տեսնում էին դոցա:

Սօնան բոլոր ժամանակ լուռ, բայց քննողական աշխերով զննում էր անսես բաները: Կարմիր թուղթը զգիրը կարգալով ասաց որ հինգ հարիւրանոց է: Իսկոյն Սօնայի աշքերից գլորւեցին մի զոյգ արցունքի կաթիլներ պատկերի երեսին, երբ նա իր ձեռին զննում էր, իսկ շրմունքներից այնպիսի մի թառանչ ժայթքեց, որ գուշաբութեամբ լոռղ ծերունին լսելով մնաց զարմացած նայելիս դէպի նա:

Պատկերը Յ-եանի պատկերն էր քաշւած իր կնոջ ու զաւակների հետ, որին Սօնան ճանաչելով թափեց նորա այտերին այն զոյգ արցունքի կաթիլները, որ գէթպատկերին լինի հասնին նորա համբոյրի փոխարէն . . . իսկ թառանչովն ցոյց էր տալիս, որ նրա որտի Յ-եան սէր մասնիկները գեռ չեն բուժել տասն և իննը տարի, ու անհուն նզովք էր թափաւմ գէպի ոյդ բոլորին պատճառ եղող Ապրեսեանի գերեզմանը:

Նոյն երեկոյեան ուղիղ այն ժամին,
երբ Յ-եանը տւել էր իւր անմոռանալի

համբոյրը, Սօնային գտան իւր տանը լսեղնեած . . . :

Ուղիղ Զատիկ կիւրակի էր:

Ամբողջ զիւղացիք զափ ու զունայով, երդ ու հրազններով ողջունում էին գարնան գալուստը . . . Սայլակը գոլորւելով տանում էր մի արբած խմբակ: Իսկ Սօնան իւր խրճիթից ուղղում էր զէպի նոցա իւր կեանքի վերջին շնչով էլ իւր վերջին անհուն վշտերով բոցաբորբոք այն վերջին թառանչքների թառանչը, որ նա միշտ արձակում էր ամեն Զատիկ կիւրակի տան և իննը տարի շարունակ:

190—1909

Բ.

Ա Ր Ց Ո Ւ Կ Ն Վ Ե Ր

(Կ. քաղաքի գերեզմատանը).

Նոքա տասն և վեց հոգի կանայք էին
ու գնում էին լայն փողոցի ուղղութեամբ
դոյդ-դոյդ:

Ուժն դոյդ գնում էին իրար յետեից
բոլորն լալկան, բոլորն էր հագած սեւաբզ-
գեստ:

ՄԵՆՔ ԵՐԵՔ հոգի տանում էինք գե-
րեզմատուն քելեխի սպասը:

Ես ու Համբարձում ապերը գնում
էինք բոլորի յետեից նոյնպէս լալկան, ու
ծանր քայլերով:

Բոլորի տոջեից գնում էր մի
քսան ամեայ երիտասարդ ձեռին ունե-
նալով մի ձերմակ կապոց, որի մի-
ջին միայն հաց էր, ու պիտի նորից
հունցւէր արցունքների առատ ջրով:

Ո՞հ, սարսափելի կլինի գերեզմատա-
նը, վերջապէս խօսեց Համբարձում ապե-
րըն վանելով լութիւնը:

Իսկապէս որ սարսափելի կլինի, ու չը
գիտեմ ինչպէս անեմ, որ ներկայ չ'ինեմ

սգահանդէսին, — պատասխանեցի ես: Այնքան
չէր լինիլ լաց ու կոծ, որչափ պիտի լինի
Սարուի մահը լոելուց:

— Ե՞թէ Սարուն վախճանւել է, — ասա-
ցի ես, թէ կուզ լու չէի ճանաշում նրան
ու յիշում էի միայն մի երկու անգամ ե-
րեսանց տեսնելուց փողոցում:

— Եյս, հէնց տուն է հասել թէ չէ, 10
օրից յետոյ մեռել է, — ասաց նա վերջ տալով:

Ափսոս Սարու, ափսոս:

Ափսոս, հաղար ափսոս, — կրկնեցի և
ես, ու լուռ յետեիցի նորան՝ յետեից ըն-
թանալով:

— Ինչ անենք, ինչ ենք կարող անել
Աստուած, բոլորիս ստեղծել է տասնելու
համար, — ասաց նա, ու ձանձրորէն
գլուխը օրօրեց, կրկն ստելով ափսոս Սա-
րու ափսոս:

Ո՞հ, ինչպէս ես տսեմ այդ, ինչպէս
բանամ բերանս ու տսեմ Սարուն մեռել
է. չէ, չէ, այդ ինչպէս կլինի, լաւն նա էր,
որ ես մեռնէի, ու իմ գրապանից հանելով
նամակը իմանալին նորա մահը, քան ես
տսեմ այլևս չկայ Սարուն, — ասաց Համ-
բարձում ապերը, կրկն վերջ տալով, —
ոհ ինչ կլինի գերեզմատանն:

— Ուրեմն ուզում էք գերեզմատանն առել մահը, ասացի ես, զուշակելով որ Սարուի բարեկամներից մէկը պիտի լինի կանաց մէջ:

Այս, պիտի ասենք, երեք օր է, որ նամակ եմ ստացել, ու չփառէի թէ ինչպէս յայտնել դժբաղզութիւնը: Բայց այսօր ձեր այդ ծանօթ կանայքը, որ եկել են ու գնում են իրենց սիրելիների գերեզմանների վրայ ողբալու, մեր կինն ասաց՝ մի քանի սպամայր էլ վերցնենք, ու Սարուի մահն էլ յայտնենք այնտեղ, որ սպիտամանակ լսուի սուզը, — ասաց Համբարձում ապերն ու լոեց:

Ես ուզում էի հարցնել՝ թէ ո՞ր կինն է Սարուի բարեկամն, բայց նա արգէն հեռացել էր դէպի առաջ, որի հեռանալը կապ ունէր երիտասարդին մօտենալուն, որին ես չէի նկատել, ու որին Համբարձում ապերը խղճուկ եղանակով ասաց. — այժմ դուք յետեներից եկէք, իսկ ես գնամ առջենիցը, կարծես դժւառանալով նայել երիտասարդի երեսին ու այրող աչքերին, որ մի քանի բուլէից յետոյ պիտի թափէին երիտասարդական խղճուկ արցունքներ, դառն հեկեկանքով:

Բայց ես Համբարձում ապօր լոելիցն ու հեռանալուցն էլ ոչինչ չհասկանալով, երբ մնացել էինք ես ու երիտասարդը մենակ, — դիմեցի նորան հազիւ լոելի ձայնով, որ կանանցից ոչ ոք չլսի, որ մի գուցէ Սարուի բարեկամը լինի, թէ քանի ժամանակ է ինչ Սարուն գնացել է:

Նա նոյնալէս միայն մեղ լսելի, բայց ուրախ ու գւարթ պատասխանեց, որ ուղիղ մի ամիս հինգ օր է, ինչ գնացել է, նա առանց պատասխանը ընդհատելու շարունակեց թէ՝ «իմ եղբայրս ա իլ Սարուն, ովա ինչո՞ւ ես հարցանում, երիի գու էլ ես նիդարան թէ երբ է գալու, բայց հաստատ ես էլ չգիտեմ, երբ գալլ, որովհետեւ գնալուց յետոյ գեռ նամակ չեմ ստացել, պիտի շուտով գայ, տրդէն ամուսնացած կլինի: Ա՛խ, երանի այն օրին, երբ Սարուն կըգայ, չեմ կարողանում առանց նրան մնալ, ոհ, ինչէ առանց մեծ եղբօր լինելը, շարունակեց երիտասարդը այս բոլորը իրար յետեւից արագ-արագ առանց ընդհատելու, իսկ ես իսկոյն գանգտաւեցի, երբ իմացի որ երիտասարդը Սարուի եղբայրը դուքս եկաւ ու իմ ասածից փոշմանեցի. ես այժմ միայն յիշեցի՝ թէ ինչո՞ւ Համբարձում ապերը հեռացաւ, երբ մօտեցաւ երիտասարդը, ու

աշխատեցի լոռվթիւն պահպանել Սարուի
մասին, որի անակնկալ լուրը համարեա
քիչ էր մնացել որ լոի ինձանից: Խեղճ
աղայ, շուտով պսակւած ու վերապարձած
կլինի Սարուն, ահա ինչ էր մտածում նա,
չիմանալով որ նա արդին պսակւել է հոգի
զրկում, յաւիտեան չգարթներու, —անցաւ
այսպէս մտքովս, —քիչ ժամանակից յետոյ
գերեզմանանն էինք:

Բոլոր կմնայրը շրջանածե նստատած ող-
բում, հառաջում, լացում, թափում էին
կարծես վազօրօք պատրաստած արցունք-
ներ: Լացում էին Համբարձում ապերն ու
երիտասարդը: Միայն իմ ժւատ աշ-
քերս էին, որ չէին լացում ու չէին թրջ-
ւում:

Ինչքան աշխատեցի, որ գէթ երկու
կաթիլ արցունք ընկնեն աչքերիցս ու թրջ-
նեն երես, որ չլինեմ ատելի այսքան
լացող ու հեծկողներից, բայց իգուր,
քարէ սիրու երեք չխզմաց ու անխիզ
աչքերը չուզեցին թրջւել:

Ես գաւաճանած չլինելու համար ու
խմբի լաց ու կոծին իմ լոռվեամբ —ու
թաքնելով այդ, հեսացի խմբից, որ քիչ
հեռուից պարզ լսեմ նոցա գամբանասու-
թիւններն ու կարգալով գերեզմանաքարե-

րի վրայ մի որե է ողբերգական բան, որ
կարողանամ աչքերիցս խլել արցունք ու
երեսս թրջելով վերադառնամ:

Արդէն ես քիչ հեռացել էի խմբից, ու-
րոնք զլուխները խոնարհեցրած լինելով գե-
րեզմանի վրայ, որի վրայ քար չլինելու
պատճառով համարեա հաւասար էր գետ-
նին, չէին նկատել իմ հեռանալը:

Կամանցից երբեմն-երբեմն մէկը մի
տո մի բան էր ասում ու կանայք հետե-
ւում էին ձայնին արձագանք տալով ար-
ցունքով, բայց այդպիսի բոլոր ասածները,
չգիտեմ, ինձ կուր չեկան, թէ ինչիցն էր,
որ ես չէի լացում, երբ լացում էին բոլո-
րը: Ես մօտեցայ մի զերեզմանաքարի, որ
պատրաստուած էր շքեղ ճաշակով ու հա-
մոզւած էի, որ այդպիսի մի ողբերգական
բան կը կարգամ ու արցունք ստանալով
յետ գաւնամ: Թարի վրայ կարդում եմ
այս տողերն:

«Այս է տապան լուսահողի

Շուշի քաղաքի գաւառի

Հ . . . գիւղի բնակչի

Նիկոլայ Գրիգորեանի

Որ գամբարան մտաւ օտար հոգի

Սզի մէջ թողնելով իր գժրադդ

Թագուհի

Իւր միամեայ տմուսին»:

Անիրաւ աչքերում արցունիք չերեւեցան ու ես քայլելով կանգնեցի մի ուշը քարի մօտ. այսաեղ էլ այսպէս կարդացի:

Այս է տապան լուսահողի

Ալէքսանդրապօլի բնակչի

Անյայտ մի ոմն Տիգրանի

Երկար պահուվուս և ինքնապահնի»:

Ոչ այսպիսի գերեզմանների մտքերն էլ ինձ վրայ չազգեցին ու ես քայլելով հասի քիչ հեռու մի քարի մօտ, որ ինձ չտեսնեն ու առեն «Նա փախչում է մեղանից ու չի լացում»:

Այժմ երիտասարդն իմանալով եզրօր մահն, աննկարապրելի վայնասուն էր բարձրացրել: Այս վերջին քարը, որի մօտ կանգնել էի, բոլորովին անսաշ էր ու գերեզմանաքարի ձև չուներ, բայց վերան նըկարած էր մի կոռնկի պատկեր: Ես տեսնելով կոռնկի նկարով գերեզմանաքարը, խիստ հետաքրքրուելով ու լաց լինող խորը և իմ արցունքի ման գալն մօռանալով մօտեցայ քարին ու սկսեցի կարդալ քարի երկու երեսներին խոշոր տառելով զրութիւնները: Քարի մի երեսին այս էր զըրւած:

Կ Տ Ա Կ

(Իմ ընկերներին).

«Ես կեռնի եմ Արամեան

Աւաղ, վաղաժամ մտայ դամբաւրան.

Չեզ կտակում եմ վախունը մէկ մանէթ

Ու խնդրում եմ անլալ այս խընդիրք լոէք,

Իմ այս կտակը յանձ առէք,

Եւ վերաս թէկուզ կոպիտ, բարձր քար գրէք

Ու վերի կողմում մի կոռւնկ նըկարէք

Ու կոռւնկի մօտ այս տողերը գըրէք:

Քարի միւս կողմում կարգում եմ, որ երկար ժամանակ ներկ չտեսնելով գրերը, դժւար էին կարդացում, բայց տող առաղ կարդալուց դուրս էր գալիս այսպէս:

Կ Տ Ա Կ

(Առանկիներին)

«Ով դուք կոռւնք հիւսիսեան,
Զեղ խնդրում է այս, կոռւնկ գե-
լեզման,
Իմ քարին քիչ հանգիստ առէք,
Ու հիւսիսային թարմ լուրեր
յայտնէք.
Եւ երբ գարուն համնի չայ աշխարհ,
Խմբով պատէք իմ այս քար.
Եւ երբ երամակներով դառնաք
յետ
Իմ ոսկորները վերցրէք ձեղ հետ»:

Ժլատ աչքերն առանց իմ աշխատելու
զիջեցին՝ խսկոյն զոլորւեցին առաջապահ զոյդ
զնդակները, որոնց հետեւեցին յորդ արցուն-
քները...»

Արցունք սիրող գերեզմանները կա-
րողացին խլել աչքերիցս արցունք, խսկ «լալ»
չսիրող անտաշ կոռւնկանկար գերեզմանը
թրջւեց և երբ քիչ ժամանակից յետոյ եւ

միացած էի արցունքաօծ սևազգեստ խմբին
առատ արցունքով լսեցի երիտասարդի ձայնը
թէ.

«Ինչո՞ւ ծնար դու զիս, մայր, երբ աշ-
խարհքում այսքան ցաւ կար»:

1 9 0 9

Փ.

ԻՆՔՆԱՊԱՇՑՊԱՆՈՒԹԻՒ- ՆԲ ՅԱՊԱԹԱՊ

Ի

Շուշի քաղաքից գէպի արեելք 25 վերսա
նեռաւորութեամբ գտնւում է Թաղար գիւղը,
իսկ այդ տեղից 12 վ. գէպի արևմտեան հա-
րաւ՝ Քիրս անունով բարձր սարի մօտերքը
Ալան բէկ Աթարէկեանի ընդարձակ անտա-
ռը։ Անտառից մօտ 10 վ. հեռաւորութեամբ՝
գէպի Արաքս գեալը, որաեղից մօտ է և Պար-
սկական սահմանը, զանւում են Մուսուր-
մանլար և Զարիսլու թուրքական գիւղերը,
որոնց ընտկիչները տւագակութեամբ սար-
սափի տակ են պահում Հաղորութից մինչ Շուշի ընկած լեռնամասի հայ գիւղացինե-
րին թէ անտառային ու դաշտային աշխա-
տանքների ու թէ ճանապարհների հաղոր-
դացիկութեան ժամանակները ու թէ առհա-
սարակ ամեն մի մարդի, ով կուզէր ճա-

նապարհորդել Շուշուց-Կարեագին ու Հադ-
րութ իճուղիներով։ Մեծ մասամբ վնասուում
էին Թաղար գիւղի բնակիչները, որովհետեւ
յիշեալ գիւղի հողերը գտնւում են Աթա-
րէկեանի անտառային սահմանակից, ու ամեն
անգամ գիւղացիները՝ անտառացին ու դաշ-
տեցին մի որ հէ գործի համար երբ գուրս
էր գալիս գաշտ, իսկոյն ենթարկում էր
անտառում դարձան մտած աւազակների կող-
մից յարձակման, որոնք օգտելով խիստ
անտառից, աւարի թալանումից յետոյ քաշ-
ուում էին անտառի խորքերն, ու գիւղացի-
ները չէին կարողանուում հետամտել. և
բայցի այդ Թաղար գիւղի բնակիչները մեծ
մտասամբ ածխաղործներ են ու տարւայ մեծ
մասը լինում են յիշեալ Աթարէկեանի ան-
տառում, ու այդտեղ ածուխ պատրաստելով
տանում են Շուշի ու միւս տեղերը ծախե-
լու։ Առաջներում յիշեալ երկու թուրք գիւղի
յափշտականէր բնակիչները բաւականանում
էին թեթև զողութիւններով, այսինքն պա-
տահած հայեցը առնում էին գաշտային
դործիքները հագուստն ու աննկատելի կեր-
պով կենդանիներից, բայց 1903—1904 թ.
մի աւազակային խումբ բուն գրեց այդ
անտառում ու սկսեց կանոնաւոր աւազա-
կութիւնը, չխնայելով ոչ ոքի. օր չէր

անցնում որ մի քանի զողութիւն չկնի։
Այժմ իրենց զործում այնքան տուած էին
գնացել աւազակները, որ մինչև անդամ
սարերից իջնում էին Շուշուց Կարեպին
տանող ճանապարհը, ու ինչպէս ամեն մի
անցնողի, նոյնպէս և պատի վերան յարձա-
կում, մի խօսքով՝ շարաթը մի քանի զողու-
թիւնն ու մարդասպանութիւնը սովորական
էր գառել։ Իսկ երբ կառավարութիւնը աշ-
խատում էր ձերբակալուսելու, թողնում էին
նոր տեղի ունեցած դէտքի վայրը ու քաշ-
ւում բազմաթիւ սարերից մէկի յետքը, ուր
կառավարութեան պաշտօնեանները չէին
կարողանում որոնել՝ շնորհիւ անտառի լատու-
թեան ու ճանապարհորդների անորմալ բա-
ցակայութեան։

Թաղար գիւղի բնակիչները, ինչպէս
ասացինք վերելում, սեպտեմբերից մինչ
մայիս լինում են հէնց այդ խիտ անտառում
ու ածուխ պատրաստելով տանում են Շուշի
ու միւս գիւղաքաղաքներում ծախելու։
Առաջներում աւազակները այլ կերպ էին
վերաբերում դէպի ածխագործները, քան
միւս պատահած մարդք, Սրի ու գնդակի
սարսափի տակ ստիպում էին ածխագործ-
ներին որ իրենց համար ինչ որ հարկաւորէ
բերեն քաղաքից և ածխագործները տեսնե-

լով, որ իրենք առանց ածխային աշխատան-
քի չեն կարող ապրել, ստիպւած են լինում
բերել այն, ինչ որ իրենց «հրամայում»
էին։ Քիչ չէ պատահել, որ աւազակները
պատիրել են բերելու փամփուշտ, գնդակ,
սրեր և այլ սոցա նման գժոխային բաներ
և թէկուզ ածխագործները լաւ գիտէին, որ
այդ գնդակներով կը խորովեն իրենց թոքե-
րըն ու սրերով կը արեն պարանոցները,
բայց այնուամենայնիւ ստիպւած են եղել
բերելու այն, ինչ որ հրամայել են պարոն
տիրած աւազակները։ Այս գեռ ուազմական
պատրաստութիւնները. իսկ ինչ մնումէ ու-
տեղու պաշարին, այդ մի անդամից պատ-
փրւած է եղել ֆլա ածխագործներին, որ
ինչ իրենք են եղել ուտելիս, նոյնից և
բերեն իրենց աւազակ ընկերների բաժինը
իրենց պաշարի հետ միատեղ ու որ մասից
որ աւազակները ցոյց տան, այն մասիցնէլ
կտրեն տան իրենց, որ ինչէ չթունաւորեց
ու այսպիսով ստանում են եղել իրանց
«հալալ հախը»։ Երկար չարագործութիւն-
ներ անելուց յետոյ 1904 թւի ամառը
աւազակային խումբը ցըւեց բացի երկու
եղբայրներից, որոնք յայտնի էին «չօլախ»
(կաղ) Յուսէյնի տղերքը անունով։ Այս եր-
կու եղբայր աւազակների օրերից ոկտեց

խեղճ ածխաղործների համար մի ծանր տարեշրջան։ Առաջուց աւազակները առանց այնքան էլ երկիւղի, ինչ հարկաւոր էր լինում, պատվիրում էին ու իրենք սպասելով ճանապարհին որոշ տեղ ստանում, իսկ այժմ եղբայրների խումբը, վախենալով իրենց չնշին ոյժից, չէին մըտնում ածխաղործների շարքերն ու կանգնում որոշ տեղ, որովհետեւ վախենում էին որ կարող են իրենց թակարդ զցելով բըռնոտել ու յանձնել կառավարութեան ձեռը, քանի որ կառավարութիւնը մեծ պարզե էր խոստանում նրան, ով կ'կարողանար «յայտնի» աւազակներին տալ իւր ձեռն, — այլ երեալով ճանապարհին երբեմն այս ու երբեմն այն տարածութեան վրայ պահանջում էին իրենց համնելիքը։

Ենցեալներում՝ աւազակները կանխիկ փող չէին վերցնում, այլ ինչ հարկաւոր էր լինում այն էին պահանջում ածխաղործներից բերելու քաղաքից, թէկուդ այդ մի քանի անդամ թանգ էր նստում, քան մի որոշ գումար, — այժմ պահանջում էին և բացի ուտելու պաշարից ու ուղղման պատիւներից և իւրաքանչյւր հորից¹⁾։

1). Մի հորում լինում են երեք մարդ։

օրական մի ոուրի «ձեռի խաշլ»։ ածխաղործները սահպւած էին լինում խոնարհւելու աւազակների այս մի պահանջի տոջե, որը իրենց համար մի երկրորդ ծմակատէր էր¹⁾։

Սյժմէան երկուհոգեան խումբը այնպիսի արագութեամբ էր գործում, որ ոչ ոք չէր կարող հաւատալ՝ թէ գոքա միմիայն երկու հոգի են²⁾։

Միայն մի շաբաթւայ ընթացքում հասցնում են Թաղար գիւղին հետեւեալ վընաները. 1) Սուբուրատու կոչւած տեղն թալանում են երկու անզէն փայտ կարողների մինչև վերջին շապիկները. 2). Շուշուց 10 վերսա հեռաւորութեամբ դէպի արեւելք Թաղար տանող ճանապարհին թալանում են Մովսէս Շահըի հոմին ու ինչ որ առած է լինում քաղաքից տուն տանելու, առնում. 3). Թաղավարդ գիւղի հողերում Ուզոնդէկ անունով սուբբի (ուխտատեղ) մօտ սպա-

1). Ծմակատէր-անտառի տէրը, Աթաբէկեանը, որ եւրաքանչիւր հորից ստանում է օրէնը մի սուրի փայտի փող։

2). Այնքան գողութիւնը սովորական էր գառել ու մարգասապանութիւնը բնական երեխթ, որ մի անգամ աւազակներին սովանելուց յետոյ (ինչպէս պիտի աենանենք յետոյ) Ալքսանը գնալիս է լինում Շուշի ածուխ ծախելու, Քարին-տակ անունով գիւղի բնակիչները լաց լինելով գը-

նում են Դալլաքեան անունով նոյնպէս մի թաղարեցու ու ինչ որ աշխատած է լինում հինգ տարի օտարութիւնում աւելի քան ութհարիւր ոռութիւր և ապրանք տանելիս, չփ թողնում որ անցնի 10 վերստ մնացած ճանապարհը ու տեսնի կնոջն ու զաւակներին երկար բացակայութիւնից յետոյ:

Մի խօսքով այնքան մարդ են ոլլոկում ու սպանում, սարսափ տարածում, որ մինչև անգամ ածխագործներից շատերը դադարեցնում են գործն ու չում են գիւղը, բացի երեք հորից:

Երկար ժամանակ այսպէս են վերաբերում թէ մնացած երեք հորի մարդկանց հետ ու թէ աւելի գաղանաբար հանգիւպում ամեն մի պատահող հային: Վերջապէս գաղարում են գործելուց և երկու հորի ածխագործներն ու մնում են միայն մի հորի մարդիկը:

Այժմ աւելի է անտանելի դառնում այս մի հորի մարդկանց կացութիւնը, ու

Դալլաք են լինում գաղտից գիւղը, ու երբ Ալեքսան հարցընում է թէ ինչ է պատահել, ասում են թէ աւագուները մի եղ են գաղացել (որն այն օրը կրած է լինում ու կարծում են՝ թէ ելի պիտի տարած լինեն, աւագուների սարսափն այնքան ազդած է լինում գիւղացիների վրայ, որ Ալեքսանը չի կարողանում հաւատացնել, թէ ինքն ոչնչացել է նոցա:

բովինուն առաջներում ինչ որ հարկաւոր էր լինում աւագակներին, այդ առնում էին բոլոր տծխագործները, ու ծախքը իրենց մէջ բաժին անում, իսկ այժմ այդ բոլորը պիտի իրենց վրան վերցնէին այդ մի հորի մարդիկը, որոնք են. — Ալեքսան Սահգուխտեան, Սահնուկ Խաչումիան և Խոսրով Ալյինեան:

|||

Աւագակները տեսնելով որ բոլոր ածխագործները գնացին ու մնացին միմիւայն մի հորի մարդիկ, ոչ թէ իրենց պահանջները թեթեացըին, այլ բացի շատապահանջ գանեալուց կատաղցին, որ իրենց չեն յայտնել այս հորի մարդիկն՝ թէ նոքա (միւս հորի մարդիկը) գնալու են, որ իրենց վերջին հաշիւները «մաքրէին», ու նոյնիսկ ուզեցին կոտորելու նոցա: Անշուշտ կը կոտորէին էլ, եթէ սոքա երգումով չհաւատացնէին թէ գնացած մարդիկը մինչև երեք օր կրկին բոլորը գալու են ու եթէ բացի զրանց լինէր մի ուրիշ աղբիւր աւագակներին կերակրելու համար: Եղբայր աւագակներին մարդիր են լինում

մինչև չթալանել ածխագործներին վարպետօրէն, որ վերջիններս երբ սեզօնը վերջացնելու մինեն ու ուղենան առն գնալ, նորից բոլորից «հալալ» ձեռքով մաքրէն, ու կոտորեն, որ չգնան ու իրենց մասնեն կառավարութեանը:

Աւագակներն այժմ սպասում էին երեք օրուան լրանալուն ու բացի զանազան տեսակ թանգարին ընծաներ պատիրելուց, — հորի շրջակայքից չէին հեռանում մասձեռվ, որ գուցէ սոքա էլ նոցա պէս կփախչեն ու իրենց կթողնեն առանց մարդկային կթի կովերի:

Երեք օրով աւելի առմասակ են ունենում գնացածներից ածուխ անելու ու մատղիր են լինում, որ երեք օրը լրանալուց յետոյ, իրենք էլ նոցա պէս գաղտնի հեռանան անառափց. այդ պատճառով էլ էր, որ երեք օր էին ժամանակ դրել մինչ զնացած ածխագործների կրկին վերադառնութը:

XXX

Օպսասոսի վերջերին էր: Արեգակը երեկոյեան կախելով բարձր Քիրս սարի սառըստից, տալիս էր իւր վերջին հրաժեշ-

տըն յաղթանգամ ու համարձակ սարին, ու միլիօնաւոր բոցիկներով անցնում գովացնելով հրկար բոցավառ բնութիւնը: Բազմաթիւ զանազան կարգի թոշուններ թողնելով Քիրսի մերկ գագաթն երամակներով վեռագաւանում էին «Կարմիր քար» կոչւած ժայռի մօտ գտնեսող հպարտ ծառերը, որնց վրան էին թառ լինում, անցկացնում գիշերները: Հիւսիսային մեղմիկ զեփիւոր մերթ ընդ մերթ գալով օրօրում էր բարձըր ծառերի օրօրուղ գագաթները, կարծես աւետելով արեգակի այդ վառ կանթեղի հանգումը: Ծառերն ալիքաձեւ խոնարհեցնելով իրենց գլուխները, խումբ-խումբ շընորհակալութիւն էին յայտնում եկող զեփիւոին ու հիւրասիլում էին թոշուններին:

Եղբայր աւագակները, որ շոգ բնութիւնից մտել էին խիտ անտառի խորքը, որ չնկատեին արեգակի բիւրաւոր աչքերից ու յայտնեն կոսկիտ երկնքին իրենց այնքան առատ յանցանքները, — այժմ գուրս գալով դարանից նստուել էին Կարմիր քարի վլախին ու զննում էին ածխահորի շընակայքը:

Մեծ եղբայրը հանելով սուրը, որ մի շաբաթ առաջ Ալեքսանն էր բերել, արձա-

թէ պատեանով, պսպուն, մերթ նայում
էր այս ծայրին, մերթ միւս ու փոքր եղ-
բօրը նայելով քթի տակին մռմռում լսելի
ձայնով:

— Մի ժամից յետոյ պիտի կարես
այն գլուխը, որ քեզ առել ու բերել է,
քիչ բարձր այժմ խօսեց մեծ եղբայրը զը-
նելով սուրբ պատեանում:

Տեսնելով եղբօրը լուս, մեծ եղբայրը
կրկին խօսում է. — Ասում եմ այսօր էլ
սպասենք ու վաղն այս սրից մի հատ էլ
քեզ համար բերել առնք, յետոյ կոտորենք,
ինչ ես ասում:

Փոքր եղբայրը դժգոհութեան հայեացք
զցելով ընկեր — եղբօր վրան, որ միշտ ու-
զում էր ձղձղել ածխագործներին կոտո-
րելը, ասում է: — Իմ սուրս բացի այն էլ
շատ սուր է ու շքեզ, չեմ ուզում նորը,
զու ամեն օր մի մահանայ (պատճառ) ես
գտնում այդ անհաւասաներին ուշացնելու
ու այնպէս ես անելու, որ սոքա էլ միւս-
ների պէս փախչեն ու դնալով մեզ մատ-
նեն:

— Նոքամ մեզ մատնեն, — ասում է մեծ
եղբայրն անցողական ժպիտ ընդունելով,
որ ուզում է զարմանք յայտնել եղբօր ա-

ամծի վերաբերմամբ, հաւատացնելով որ
այդպիսի բան երբէք չի կարող լինել:

— Եյո, այս, միթէ չեն մատնի, տեսաբ
այնքան խորամանկէ ին, որ չի էլ իմացինք
թէ երբ են քոչելու (չւելու): (Խօսքը
միւս զնացած ածխագործներին է վերա-
բերում):

Մեծ եղբայրը, տեսնելով որ փոքր եղ-
բայրն իրենից դժգոհ է, մտածում է մի ու-
րախացուցիչ բանով կակղացնել եղբօրը,
մինչ փոքր եղբայրը հրացանն ուզգելով
դէպի ածուխի հորը, ուր Ալէքսանը Շուշուց
նոր եկած, կանգնած է լինում հորի դուն,
ինքն իրեն խօսում է, իբր եղբօրից շատ
նեղացած, չի էլ ուզում հետը խօսել բար-
կացած ասելով, — «Եէյթանն ասում է, հէնց
այստեղ՝ տեղն ու տեղը սատկացրու հա:

— Ոչ, ոչ, երեխայական բան մի անիլ,
ասում է մեծ եղբայրը, խառնւելով նորա
խօսակցութեանը և շարունակում. — այստեղից
այդ մէկին խփելով՝ չես էլ կարող կպել
միւս ընկերներն էլ կփախչեն. յետոյ ոտի
կանգնելով ասում. — Գնանք տեսնենք քա-
մարը¹⁾ բերել է, Ալէքսանն արդէն կէս

1) Քամար-փամփուշտական որ այդ օրն են սրբաւերել
քերելու.

ժամ կլինի, ինչ եկել է. մտածելով եղբօրը միսիթարել շուտ կոտորելով ածխադորձներին, տեսնելով եղբօրը լուս, մեծ եղբայրն ասում է.—Գնանք տեսնենք քամարը բերել է, առնենք, իրենց սրերով կոտորենք ու ինչ որ ունենան, բարձենք ջորիներին ու տանենք տուն¹⁾:

Այս ասելով մեծ եղբայրը ճանապարհում է գէպի ածուխի հորը, որին և հետեւմ է փոքր եղբայրը։ Ածուխի հորը միայն մի ձորակով է լինում բաժան կարմիր քարից, որի միջով վըշվըշալով արագաբարագ փախչում է Քիրափ տակից բղիստ վտակը, կարծես երազած լինելով այդ օրը իւր ափերը տեսնել արիւնոտ։

Զորի միջով անցնելիս մեծ եղբայրն ասում է.—Երբ կը կոտորենք, կբերենք ու կածենք այս ձորը ու ջուրը չի թողնիլ երկար ժամանակ դիակները հոտելու, մինչեւ բոլորովին կուշանայ։

— Աւելի լաւ չի լինիլ, որ հէնց ածենք իրենց ձեռներով փորած հորի մէջը, որ

1). Ժամանակին ձայնն ասում էր, որ ամեն տեսակ ծանրոցներ ժողովելուց յետոյ աւազակների հայրը Զոլախ Յիւսէինը, զայիս էր ու տանում տուն, Մուսուրման-լարը։

այրւեն և ոչ ոք չխմանայ՝ թէ ուր գնացին ու ինչ եղան։

Բոլորովին լաւ ես հնարել, —ասւած է՝ հոր փորողն ինքը մէջը կը նկնի, ու թող այգպէս էլ անենք, կածենք հորի մէջ, — «մեծ» եղբայրը, տեսնելով որ արդէն եղբայրը կակը է և խօսում է իւրհետը ու քայլում առջեից գէպի անզօր հորը։

ΠΔ

Ալէքսանդր Շուշուց գալով ախուր նըստած էր ու երկար չէր խօսում։ Լուս ենու կարծես համբացել են նորա երկու ընկերները։

Վերջապէս Մանուկը լսութիւնը վանելով ասում էր.—Ինչո՞ւ էք լուս, ինչո՞ւ չէք խօսում՝ թէ ինչպէս պիտի անենք։ Հիմա կը զան ու մեզ կը կոտորեն։ Զէ որ մենք ասացինք՝ թէ մինչէ երեք օր պիտի զան, ու երեք օրն այսօր լըլմանում է։

— Էլ մի բան չի մնացել անելու, լաւ

նա է ամեն ինչ թողնենք ու փախչենք, — ասում է Խոսրով:

—Ի՞չպէս փախչենք: Պա չես տեսնում, որ քարին վրայ նստատած Ալէքսանի գալուն են սպասում, հիմի կը գան ու . . . — ասում է Մանուկը գախենալուց խօսքը չաւարտելով:

Ալէքսանը լսելով, որ «քարի վրան նստած իւր գալուն են սպասում», գուրս է դալիս փոքրիկ անից, որի մի մասում իրենք էին բնակւում, իսկ միւս մասում ջորիները ու նայելով տեսնում է, որ իսկապէս քարի վրայ նստատած իրան են սպասում, երկի հրացանի փողը տեսնելով դէպի իրեն ուղւած, յետ է դառնում ու գունատւած մնում տանը կանգնած:

Նա գոյնզգոյն փոփոխուում է, երբ յիշում է, որ ինքը խօսը է աւել, մինչ երեք օրը կը կին դնացած ածխագործները գալու են և երբ տեսնեն արդէն երբորդ օրը մթնում է, սար սափում է, ուղիլի մագերը վշերի պէս դիք ու բիզ են կանգնում, երբ մտածում է, որ չէ որ ինքն ասաց, որ մինչև երեք օրը չդան իրանք նրանց զոհն են:

Ուրիշ մի հնար չկար այն ժամանակ փրկուելու, ու մի խօսքով երեք օրն լրա-

ցել էր ու սպասում էին մարդկային երկու մարդ հրեշտակներին:

Շուարած Ալէքսանը, ինքն էլ չիմանաւ լով թէ ինչ է մտածում, զլուխը քաշը բած կարծես խորը մտածելով մօտենում է այս փայտէ պատին, այն պատին, ջորիներին ու նոցա ախոռներին: Ամեն ինչ էլ իրենց տեղն են, կրկին նա դուրս է գալիս դուռը, ու այժմ աւագակներին չի տեսնում, որովհետեւ Բարդուղիմէսուհան դիշերն արդէն սփռել էր իւր սև վերմակն ու խաւարեցրել ամբողջ աշխարհի հետ և խղճուկ հորի շրջակայքը. ոչինչ հեռւում չէր եւրեռմ: Այժմ նա աւելի սարսափած յետ դառնալով մտաւ կիսարենակ ու կիսակենդան տունը ու մնաց արձանացած, տեղը բոսծ: Աւագակներն ամեն իրիկուն այն ժամանակն էին դալիս Ալէքսանը յիշեց, որ նոցա գալու ժամանակն է:

«Տօ, հնչմաւ էք սառած սառած կանգնել. գէ եա (կամ) փախչենք, եա մի բան անենք ախէր... ասաց Մանուկը խիստ փախեցած, խօսքն լիովին չաւարտելով:

Մանուկի այս սիրտ պատուղ խօսքերից Ալէքսանը կրկին շարժւեց դէպի ախոռները ու կրկին նայեց պատերին, սա տեսաւ ամեն ինչ իրենց տեղը, — ուրեմն

ասա մեր տուննէ, էլ ինչու պիտի վախենալ,
յանկարծ մտածեց նա ու գտնալով ընկերներին.
ասաց — Տղերք, էլ սպասելն աւել-
նորդէ:

Մանուկն ու Խոսրովը իմանալով, որ
պիտի նա մի բան վճռած լինի, այսինքն
երկուսիցը մէկը, կամ թողնել ամեն
ինչ ու փախչել, կամ լուս սպասել ու զոհ-
ւել, աչքները գեանից բարձրացնելով
մնացին զարմացած նայելիս դէովի Աղեքսանը:
Զարմացած էին մնացել այս, որովհետեւ թէ-
կուզ գեռ չէին իմանում, թէ նա ինչէ
վճռել և ուզումէին հարցնել, բայց նամի այն-
պիսի եղանակով ասեց «աղէք», որ կարելի էր
շատ բան հասկանալ, ու երկուսնէլ համարեա
միասին ասում են՝ լաւինչորուզումես անենք:

— Ահա թէ ինչպէս, — ասումէ Աղեքսանը
նոյնպէս ազդու ձայնով:

— Եթէ փախչենք կը զրկենք ամեն
ինչից, ու գուցէ չի էլ կարողանանք գէթ
մերկ ազատել մեզ, որովհետեւ մի բօպէ էլէ
աչքները հորի մօտից չեն հեռացնում, ու
եթէ յամառելով փախչելու էլ լինենք, իսկոյն
կը խփեն մեզ, ու գուցէ ոչմէկս էլ չկա-
րողանայ ազատուել գնդակների առջնից,
իսկ եթէ մնանք. . . . էլ չի կարողանում
գերջացնել խօսքը, վերջէ տալիս այս-

պէս. «Չեզ յայտնի է էլի, էլի՞նչ ասեմ»:

— Հայ պաինչպէս անենք, կրկն խօսումէ
Մանուկը, իսկ Խոսրովն ուշադրութեամբ
սպասումէ բաւն միտքն իմանալու Աղեքսա-
նից, թէ ինչէ ուզում ասել:

— Միայն մեզ մի բանէ մնացել ու եսէլ
այն եմ ուզում ասել, այնպէսէլ անենք
Աստօծ, (Աստուած) Աստօծ: Ի՞նչպէս, ամէք
դէ շուտ արա ասա, սիրոս պատառեց հիմի
հօ կը գան, ասումէ Մանուկը նայելով գեպի
դուռը, իսկ Խոսրովը աչքերը չըռած նայումէ.

— Ես ու Խոսրովը, — ասումէ Աղեքսանը, — կը
բռնենք ամեն մէկս մէկին, ես մեծ եղբօրը,
իսկ դու, Խոսրով, փոքրին, իսկ դու Մանուկը,
իսկոյն հասնելով կը հանիս մեծ եղբօր սու-
րը ու շտապով կիսանես փորը, իսկ յետոյ
միասին կը հանենք փոքրին: Մանուկը
լսելով, որ ինքը պիտի սուրը հանի ու փորը
խառնի, իսկոյն գունատուումէ ու չի կարո-
ղանում ոչինչ ասել: Խոսրովը քննու-
զական կերպով լսելով բոլորն ու կարծես
համոզւելով, ասումէ, —Պալաւ, մենք ի՞նչպէս
ենք կարող մօտեցած նոցանից ու բռնած-
նոքա զինւած, իսկ մենք ամենքս մի կա-
զինով:

— Մեզ կացիններն էլ չէին պէտք, ահա
մէ ինչպէս պէտքէ մենք անենք: Մանուկի

ուժը գուցէ չը յազթի (Մանուկը բոլորից փոքրն էր) պահել, իսկ քոնը, Խոսրով, կը պատի, ու գու պիտի պինդ բռնես փոքր եղօրը, իսկ ես, ինչպէս ասացի, մէծին. Երբ նոքա կուզն ներս մանել դոհից, մէնք պիտի ծածուկ սպասենք գուան յետեւմ. Նոցա մանելուն, Աստօծ Աստօծ:

Դեռ Ալէքսանը խօսքը լիովին չէր աւարտել, երբ գուանը լուեցին ուսնաձայներ:

Դուռը բացւեցաւ ու երկու աւազակ եղայլները ձեռները սրերին գրած մասն ներս. ինչպէս Ալէքսանը պատերազմի ծրագիրը կազմել էր, այնպէս էլ յաջողութեամբ իրագործւեց. մէծ եղբայրն արիւնարբու կիսամորթ խոզի պէս թաւալումէր գետնին, իսկ մնաք հետաքրքրւենք փոքրի մահով ու տեսնենք ինչ է անում ֆլո, բայց ներս քօմուրչին, այն փոքր, բայց մէծ սղերի ու սղամայրերի մայր աւազակի հետ. Խոսրովը բռնել էր հորա ձեռը, իսկ Ալէքսանը աջ: Մանուկը դամոկիւան սուրը ձեռին բռնելէր նորան զլիխին ու ինքը կանգնել առաջին և պատժումէր յանցանքի համեմատ կարգալով նորա օրինական պատիժը, ասելով, — գու էիր որ սպանելով մեր զիւզացի Դալաքեանին թողեցիր կին ու մանուկները սղի մէջ, գու էիր որ թա-

լանեցիր Շահրիեանին, գու էիր որ տաճաջում էիր մեզ տարիներով ու եկել ես մեզ սպանելու. սոցա նման ամեն նորա մի մեղը կարգալով երեսին տալիս էր պարսկական պատժի եղանակով մի հարուած:

Միայն աւազակը մի բան ասեց բազմաթիւ վերքերով բեռնաւորւած: Նա ասեց, որ լաւ արին որ առաջուց իր եղրօրը սպանեցին, «որին ես տեսայ տաճւելիսի՞ձեր վերքերից, որը չէրուղեցել երեք օր առաջ ձեզ ածել հորի մէջը»: «Հորի մէջը, — գու լաւ յիշեցրիր մեզ ձեր գոռի (գերեզմանի) տեղը» ու հասցըրին վճռական հարւածը:

Մութը բոլորովին թագաւորել էր ու ոչինչ հորի շուրջը չէր նկատելի:

Քանի բօպէից յետոյ երկու եղբայրները երար գրկած մտել էին այն հորի մէջը, որի չորս կողմը տարիներով մահ էին որիս ուում ու մի քանի րաուէ առաջ մտածում էին ածխագործներին ածել նրանց մէջն. Կծոտում էին կիսաածուխ փայտերն ու դեռ չէին վերջացրել վերջին խոխոցն, որով գուցէ ասում էին «ածխագործներին ածենք հորի մէջն», իսկոյն արկելքում երեաց կոլոր լուսինը, ու ալիքաձև օղակ շողակ բարձրացնելով լոյսը, բարձրացաւ

Երկինք, գեղեցկուհու ժպիտով ու լուսաւորեց և բոլոր աշխարհի հետ խղճուկ ածխագործների հորի շրջակալուքը, իսկ նորա Եթերային լոյսի սաւերում կարդացւում էր «ինքնապաշտամութիւնը յաղթող» բառերը:

Եւ երբ հանգիստ նստուել էին երեք ընկերները, ոչոքի երեսին գոյնի փոփոխութիւն չըկար: Ալէքսանը գառնալով ասաց. — Մանուկ, մարդիս մեծ թշնամին է, ծուլութիւնն ու վախը, և մարդ, եթէ հեռու լինի այդ երկուսից, — հեռու կլինի և երրորդական թշնամուց.

1904 — 1909

Պ.

ԳԻՄԱՆԱԿՈՐ ԸՄԲՈԽԸ

(Թաղլար գիւղում).

Տ

Յ Ա Կ Ռ Բ Հ

Գիւղում տիրում էր խառնաշփոթութիւն. Պրիստաւը նստելով գիւղում էր ուղուժ գնալ, մինչև որ չգանձւի պետական տուրքը, ու անինայ ծեծել էր տալիս զիւղացիներին, ինքն իրեն արդար զգալով, որովհետեւ մի անգամ լսելով ժողովրդի խընդիրքը, յետաձգել էր գանձման ժամանակակիցները, որն այժմ լրացել էր ու ոլիսի գանձւէր:

Այդ տարի գիւղի բերքը շատ սակաւ լինելու պատճառով գիւղացիները չեին կարողութիւմ լրացնել տուրքը:

Գիւղում թագաւորում էր ծեծը, հայնոյան քը, աղաղակն, ու կանանց լաց կոծը, փո-

թորեկի սկ ամպերը պատել էին զիւղը: Գիւղի Գրիգոր աղան, վաշխառուներն ու խոջան Ղաղարները ու այդ պղառը, իրենց ձեռնատու ասպարիգում որոնում էին իրենց որուր: Կահայք արցունքները երեսներին բռնել էին գորդի մի ծայրից, իսկ «սուզիս» թալանչիքն միւս:

— Մի ամսիր, ախր սուզիս, 5 մանէթի համար 25 մանէթանոց գործւածքս. — ասում էին չունենոր ու այրի կանայք, չթողնելով իրենց չորս սիւն գորդերի ծայրը: — Զէ, բիդի ամսիր, մինչև որ 5 մանէթը 6 մանէթ շինած ընթերես, գաբակ (գորդը) չես ամսիր ասում էին «քեանդ-խուզաներն», ու փոշոտ փողոցով քաշ ապիս լացող կանանց տչերի լոյս գորդը: Ու կանայք անդօր երկար կանգնած աղի ու գառն արցունք թափելով նայում էին նրանց յետերից, մինչև որ նրա միակ գորդը կամ միւս գործւածքը քցում էին ժողոված դարս ու կարպեաների մէջն: Եւ խեղճ կինը մնում էր աչքը չուած դէպ այն կողմն ոչ թէ անխիղճ դասաւորի վերայ, ալ դէպի իւր գեղեցիկ ձեռագործը, որ գուցէ յետ չզար, եթէ 5 սուբուն վրայ չաւելանար և անքան, մտածելով՝ թէ արդեօք սուզիսն ինքը չի վեր-

ցընելու իր գեղեցիկ ն ու հնամաշն իրան տալու ասելով՝ «այս եմ քեզնից բերիլ»:

Սակայն գեր այսքանով բաւական չէին աղքամների հիւթը ծծող գատաւորները. Նրանք ամեն մէկը երկու-երկու եստառու իրենց հետները վերցրած ծեծել էին տալիս խեղճ գիւղացրւն, իւր տան շէմքին, մինչև որ «տնատէրը» կինը գուրս բերէ ասն ամեն բան, որ մի քանի անգամ թանգ արժենայ, քան որքան պահանջւում է նորանից: Եւ ահա այդպիսի մի ժամանակ էր, երբ փայտէ կոթեր ունեցող կացինները, ինչպէս ասում է ասածը, կոտորում էին անմեղ ծառերի փայտերը, — գուրս եկաւ Յակորը, ու խաղաղութեան փողը փշելով խաղաղացրեց զիւղը, վճարելով պետական հազարների համեսող տուրքը և պրիստաւին ձանապարհեց զիւղից:

Այժմ լացող ու ծեծւող զիւղացինները գովում էին Յակորին և ուզում էին լիզել նրա սաքն ու վէշերը:

— Ես իմ բաժինս հէնց այսօր կը բերէմ, ասում էր մի զիւղացի, — իսկ ես առաւօտեան, — ասում էր մի ուրիշը ու շտապով հեռանում մտածելով՝ թէ որտեղից ճարկեմ շուտակ. իսկ մի քանի քոպէ առաջ լացող ու Յակորից քանի տարով մեծ գատա-

ւորի հետ համարձակ խօսողը, որ աղերսում
ու աղի արցունք էր թափում, զլսի շորի
տոտներով ծուծկելով երեսը՝ ամաչելով հա-
մեստ Յակոբից, փսփսում էր փոքրիկ մա-
նուկի ականջին ու խնդրում որ թարգմա-
նիչ լինի իրեն ու ասի որ հէնց որ «մեր
մարդը» դաշտիցը գայ, խակոյն կը բերէ կը
վճարի իւր բաժենը։ Այսպէս ասում էին ա-
մենքը, բոլոր լաց եղող ու ծեծ ուտողներն
ու գնում. և Յակոբը բոլորին ժպիտով ճա-
նապարհում էր ասելով. «Երբ կը լինի այն
օրը, որ կը բերէք»։

Եւ իրաւնս ստանում էր իւր փողը, բայց
ոչ զիւղացու տունը դուրս տալով, և ոչ էլ
տյապիսի տոկոսներով, ինչպէս ստանում է-
ին զիւղի վաշխառուները և ամեն անդամ
այդպիսի մի օգնութեան համար զիւղի ամ-
բոխն ուրախանում էր ու թռչկոտալով ա-
սում. «Յակոբին չենք փոխիլ ամբողջ զիւղի
հետ, Յակոբը զիւղի զլուխն է զիւղացու
հայրն է»։

Եւ իրաւ, նա էր զիւղի զլուխը, ու
զիւղացու հայրը, նա էր միակ զիւղի հա-
մեստ վաճառականը ու խղճով ծախս անո-
ղըն ու թէ զիւղացուն նեղ օրերում խոր-
հրդառառն և օդնողը։

II

Ա. Ի. Ա. Գ. Ը.

Կրկին զիւղումը կար խառնաշփոթու-
թիւն։ Այժմ չկար պրիստաւն իւր «մհա-
սիլ» հասաղուներով, ու հարց չկար զիւ-
ղի սուդեաների ու վաշխառուների կեղե-
քումների մասին։ Ոչ, այդպիսի բան չէր
այժմեան իրարանցումը։

Զիւղի ներքին «Կէտին-Զոր» կոչւած
տեղից, որտեղով հսում էր «Դուռուչայ»
զետը, որի ուղղութեամբ գէտի սարը բար-
ձրացող խճուղիով միշտ գարնան սկզբնե-
րին զնում են դէպի սար զաշտավայրե-
րի թիւրք բնակիչներն «Էլ» կոչող թա-
րաքաման, որոնք աշուն ու ձմեռն անց են
կացնում Արաքսի ափերի մօտ ու տաք եր-
կրում, իսկ գարունն, ու ամառը սարում
ու թափառաշխիկ կեանք են վարում։
Սար բարձրանալիս խառնել էին իրենց
ապրանքների հետ և զիւղացիների անտ-
առները և ուղում էին իրենցի հետ ուժով
բարձրացնել սարը, որտեղից այլիս յիտ
դարձնեն անկարելի էր։

Այդ էր իրարանցումի պատճառը, որ սախակել էր գիւղացիներին իրարանցման մէջ ընկնել, որը փայտով, որը հրացանով, որը կացինով գնում էին կուի վայրը լսելով կանչող խաշնարածի ձայնը:

Կոխուը կատաղի էր շնորհիւ երկու կողմերից համնող օդնութիւններին ու երկար շարունակւեց, մինչև որ մի խումք կարիճ գիւղացիներ ճեղքելով թուրքերի ահազին էլը յետ դարձրին գիւղի նախիրը:

Երեկոյեան դէմի էր, ամբողջ գիւղը դուրս էր թափեւել: Գիւղացիներից որը դաշտից, որն այգուց, որն անտառից վերադառնալով ժողովուել էին գիւղից դուրս գտնւող կալերը ու սպասում էին կուից եկող քաջերին տեսնելու: Եւ անա յաղթութիւն տարած Աւագը իւր խմբով դալիս էր, և պարծանս ամենքի յաղթութեան պատով ու ոգեւորուած:

Իսկոյն ամրոխը շրջապատեց նրան իւր խմբի հետ գնուում դոչիւնով,

— Կէցցէ Աւագը, որ միշտ ազատում է մեզ թարաքամի թալանիչ հոսանքից:

Գիւղում այլոս չկար շփոթութիւն ու չէին կանչում, «հասէք, ազատուցէք, թարանցին քշեցին տաւարն» ու կանանց հե-

ծկլտոցն. և այդ բոլորը, բոլորը փոխարինել էր ուրախութեան՝ շնորհիւ Աւագի, որը իւր խմբով մանում էր գիւղը: Նորահարսերը տեսնելով իրենց պատրոն ու տարիքները (տան մեծերն) բացակայ՝ ամենքն էլ թափորում բարձրացնում էին և իրենց լուսից զրկող երեսների ծացկոցներն ու նայում դէպի յաշխութեան ոգի Աւագը:

III

Ա Լ Է Ք Ս Ա Ն Դ Ր Ը

Կարճ ժամանակւայ ընթացքում ստերբորդ անգամն էր, որ կրկին զիւղումը տիրում էր իրարանցում։ Այս անգամուայ տեսարանը այլ էր, քան առաջինները ու հեծկլտոցը, լացը, վայնասաւնն աւելի սիրու կըտրատող էր, քան առաջինները։ Մանաւն հողմ էր փշում դաշտերիցը, զիւղացու ոսկե յոյս արտերի կողմից ու անտառներից ու զիւղացիները չեին կարողանում դուրս գալ հանդ ու խնամել արտերը։ Մի ամսուայ ընթացքում քանի մարդ էին թալանել, սպանել, ինչքան կանայք սև կապել մի խումբ աւագակների երեսից, որոնք երեացել էին այդ ամառը, մահւան երկիւղ էին սփռում տմբողջ Դիզակ ու Վարանգայի լեռնամասի դաշտալին ու անտառային մտաերում, մերթ այս զիւղի մօտ երեալով ու մարդ թալանելով կամ սպանութեամբ, մերթ՝ այն բայց բոլոր զիւղացիներից աւելի տուժում էր Թաղարք զիւղի ժողովը,

զովուրդը, չնորհիւ նրան, որ աշխատանքի աղբիւրը միակ «հանդն» էր։

Այս թափորը ժողովուած էր մի դիսկի շուրջը, ուր ամբողջ զիւղացիքը, թէ հողագործն, թէ քրանտարը, թէ փայտահատն ու ածխագործն և թէ խաշնարած, ժողովուել, ողբալով հողին էին յանձնում այդ զիւկը, որ նոր էր սպանւել սարսափ տարածող աւագակներից։ Բոլոր ժողովուրդը ողբում էր սպանւած անմեղի կորուստը, բայց աւելի լաց լինելով իւր անտառնելի կացութիւնը, որ էլ չէր կաբողանում գնալ մի գործի, ճարել մի աշխատանք, որը նրա համար պիտի զբանէր միայն և միայն դաշտում։ Մի խօսքով լինել կամ անցնել այն տեղով, որտեղ երեւացել ու երեսում էին աւագակ—հիւրերը։ Իսկ վերջիններս լինում ու երեսում էին այն ամեն տեղերում, որտեղից միայն զիւղացին կարող է մի կտոր հաց ճարել։

Ահա այդպիսի մի ժամ էր, երբ բոլոր զիւղացիները ննջեցեալլ թաղած մնացել էին տէրտէրի շուրջը ժողովուած ողբալիս իրենց անտառնելի դարձած կացութիւնը, յանկարծ լուր բերին, որ Ալէքսանը¹⁾ կոտորել է բոլոր զիւղացիների թշնամի ու

1). Առ զբոկիս «Խնբնապաշտպանութիւնը յոզիող» պատկերի մէջ երեւող Ալէքսանն է։ Ծան. ներ.

բոլոր սպամայրերի սպապատճառ եղող աւտզակներին:

Իսկոյն ամբողջ գիւղը դպրոցաց ու բոլոր մարդիկ—կանայք, ծերեր ու երեխաները լսելով սարսափի մայր—սարերի վիշապների ոչնչացման աւետումը, — այդ թանգարին լուրը, իսկոյն ամենքը ժողովւելով սպասում էին տեսնելու եկող փրկիչ, Ալեքսանին, այդ գիւղացոցը աւագակների ճորտութիւնից ազատող Թաղլարի Ալեքսանդր Ա-ին, որն հիմնովին աւերել էր վիշապների դղեակը, որի ստւերը պատել էր ամբողջ լեռնամասի գիւղերին ու պահում էր սարսափի տակ:

Ահա և նա... մեղ ծանօթ ամբոխը շըրջապատելով և նորան, էլ չեն յիշում իրենց կրած նեղութիւնները. այս, չեն յիշում, ուրովհետեւ գիւղացին միշտ տանջել է և սովոր է տանջելու ու բոլոր տանջոնքը նուիսկոյն մոռանում է, այլ ևս տանջողը չըկայ... կուզի նա սով, թոքախտ կամ բոնակալ, և նա այժմ տեսնում էր, որ այլ ևս տանջողը չկայ, շրջապատել էր նորան ոչնչացնողին ու ուրախանում թոշկուալով մերթ այս կողմում մերթ այն, անցնելով գրգում, գնահատում, քաջալերում էր օգը թնդացնելով, «կէցցես» Ալեքսան, սա է գիւ-

ղի աչքը, սա է մեր «Գարիբալդին» աղաղակներով: Ահա և նա մանում է գիւղը ամբոխի առջեից յազթանդտմ, քաջութեան կընիքը գրօշմւած: Ճակատին ու բոլոր ժողովուրդը ուրախութեամբ ու կէցցէներով հոսում է նրա յետեից, չթողնելով նորան առաջանալ:

Ու կրկին կանայք բարձրացնելով իրենց երեսների ծացկոցը, նայում են այդ տիրող սաբերի աէր աւագակներին յաղթող չնչին Ալեքսան—Գարիբալդին, աշխատելով տեսնելու նրան:

I V

Տիրութիւնը պատել էր գիւղը: Այլ ևս չկային ուրախ անց ու գարձ անողներ, ու կարծես զիւղը կորցրել էր իւր կենդանութիւնը և թէկուզ չկային այլ ևս պրիստաւը իւր եասաղուներով, ծեծով, չկային դատաւորի պատճառած լացն ու վաշխառուի տուժումներն ու կեղեքումները, բայց և չկարայն Յակոբը, որը վերջ էր տալիս գիւղային Յակոբը, որը վերջ էր տալիս գիւղային Յակոբը: Այժմ եամ առխցու այդ թշուառութեանը: Այժմ եամ առխ-

բութեան պատճառն այդ էր, որ այլիս չըկար ազնիւ Յակոբը, որը իւր ներկայութիւնով խանգարում էր աղա վաշխառուներին ծծելու, անկեզու գիւղացիների արիւն քրտինքով գիշեր ու ցերեկ ուրքը քարին ու զուխը մըրիկի տակ գնելով հայթայթած հիւթերը:

Նա սպանւել էր իւր խանութում գիշերը քնած, որի սպանողները թողնելով միայն խանութի չոր պատերը թալանել, տարել էին բոլոր ապրանքը: Քահանան կարդում էր ծիսակատարութիւնը, իսկ երկու սեռի ժողովուրդը իւր վերջին հրաժեշտն էր մըմնջում:

Ամեն ինչ վերջացաւ: Ամբոխը գիւղի զլուխն ու հօրը հողին յանձնելով յետ գարձաւ: Քահանան լուռ գնում էր սուշից հագած իւր սկ վերաբերուն, իսկ նրա յետելից ճնշւած ժողովուրդը:

Այլիս ուրախութեան նշոյլ չկար ոչ ոքի վրայ ու գիւղը լուռ էր, և չէր էլ կարող ուրախ լինել, քանի այլիս չկար գիւղի զլուխն ու հայրը:



Թարաքամա էլլ չւում էր գէպի սարը: Բայց այժմ խաղաղ էր ու էլ չէր մտածում ուրիշի տաւարը տանելու:

Նա գնում էր առանց կուի բռնւելու Աւագի գիւղի սահմաններում: Եւ չկար խաշնարածի օգնութիւն կանչող ձայնը: Բայց և բոլոր գիւղացիները ժողովւած էին գիւղի շուրջն ու սպասում էին մի թափորի՝ աչքները ուղղած գէպի հեռու, գէպի գաշտի ամպոտած հորիզոնը, որտեղ Աւագը անց էր կացը և իւր կետնքը սկսած մանկութեան օրերից մինչև այն սկ օրը: Ամենքն սպասում էին մի անշնչացած մարդու գիւղի, որը սպանւել էր գաշտումը իւր գործի ժամանակ:

Նոքա լուռ էին կարծես վայրկենապէս բնութիւնից քարացած:

Եւ էլլ երբ գետի Զորիցը նայում էր գէպի այդ անշարժ ամբոխը և մտածում էր՝ թէ Աւագի խումբն է գտ ու սպասում էին իրենց առաջնորդին, որ շարժւեն առաջ: և նրանք արագ քայլածքով շտապում էին անցնել այդ գիւղի սահմաններից:

Վերջապէս հասաւ սպասող խումբը՝
երկսեռ ժողովուրդը շրջապատեց զիակն,
իւր հեծկլացով ու արցունքով սղողած
ձեռն երսկ հողին յանձնեց Աւագին ու
արցունքի ցօղով թրջուած յետ գարձաւ
զիւղը:

Իսկ տաւարածը տեսնելով, որ այլևս
չկայ Աւագը, զեափ ձորումը նստելով յորդ
արցունքով լացում էր նրա մահը, իսկ
տաւարները տեսնելով իրենց հովուին տը-
խուր սպալիս, այլ ես չէին արտծում, այլ
բառաչելով ժողովուել էին նրա շուրջն, ու
տիսւր նստուել:

▽▽

Բագւայ կատաղի քամին մռնչում էր,
ամպի պէս բարձրացնելով բագւի սովորա-
կան փոշին. բոլոր մարդիկ գնում էին իրենց
գործերին, որը սատվ, որը ձիաքարշով, որը
կառքով. բոլորը փոշացը հալածուելով,
շտապելով գնում էին իրենց գործին:

—Այ տղայ, շուտ քշիր ձիաները, քամի
է, թողի հոսանք է բերում, —ասաց միհաս-

տափոր սկարոն, կտոքի մէջը նստած ու սի-
դարը ձեռին:

Պի, մարդա է սպանւած, տես սկի-
վերցնում են, —ասաց երիտասարդ կառա-
պանը նայելով դէպի փողոցումն ընկած մի
զիակ նախօրօք կտտարելով և աղի հրա-
մանը:

Է՞ս, ինչ լինում է, լինի էլի, ըն, մենք
ինչ զործ ունենք սպանւածի հետ, —ասաց
աղան, վերարկուի ծայրերով ծնկները ծած-
կելով, որ փոշոտ չլինեն:

Կառապանը հայեացը քաշելով զիա-
կից, ոգեսրեց ձիաներին, տսելով՝ հէնց է
զարաբաղցի լինի:

—Է՞ս, որտեղից ուզում է լինի, հան-
գիստ մնայ, որ այնպէս չանեն իլի, թէ չէ
հայ—թրքական կոտորածների ժամանակ
քիչ երես տւինք՝ հիմի էլ ուզում են գլխը-
ներիս նստել, —ասաց աղան, սիգարն գէն
զցելով, որ եթէ մի ուրիշ բան լիներ կա-
ռասպանն ասած, սարփ չէր անիլ խօսելու:
Կարծես ընկած զարաբաղցու զիակը թողի
միջին հովութիւն էր տալիս նրա հաստիկ
փորին, ու այդ հովութիւնից ոգեսրւած
խօսում էր:

Շուտով գուժկանը մահւան լուրը տարաւ

գիւղը։ Կրկին ամբողջ ժողովուրդը թափւեց Ալէքսանի անտէր մնացած տունն ու ու սկսեց լացով կնքել նրա գուռը, որի միակ պահուն էր Ալէքսանը։ Ամբոխը մոլոր կանգնել էր զիւղում նորա գուան առաջ ու ողբում էր թանգագին կորսափ մահը, նայելով դէպի հեռու, անտառների հորիզոնները, որոնք այժմ պարզ էին տուանց մահւան ամպերի։ Բայց և փշում էր այնտեղ մի ուժեղ զեփիւռ, որից հպարտ ծառերն իրենց գագաթներն ալիքաձև խոնարհեցնելով՝ կարծես ուզում էին մասնակից լինել զիւղի սպողների հետ, տեսնելով որ այլ ևս չկայ այն մարդը, որ իրենց մօտ ստացաւ պահծալի անունը։

Ընթերցող, չզիտեմ, ձեզ տարօրինակ կը թւայ, թէ ոչ, եթէ տսեմ՝ այսքանը եղաւ երկու տարուայ ընթացքում. որովհեակ լը սեցիք, թէ կուզ տեխնիքական թերութիւններ աչքի ընկնող անշուք գրւած այս երեք մարդկանց պատմոթիւններից մի մի չնչին պատկեր զիւղի ամբոխի քննադատոթիւնն ու սղումն, ուստի տարօրինակ մի կարծիլ, եթէ տսեմ, որ հէնց ինչպէս այս երեք մարդը ծնունդ են այն ամբոխի, որոնք տանջւելով տանջանքի կապահներում ու կեղեքման շրջանակում, ապրելով թալանման ու աւերիչ օղակներում, վերջն բուսան այդ խարխափող ժողովրդից նոյնպէս և ընկան այդ երեք զիւղացու գնահատած ու բարեկամ ճանաչւած մարդիկն հէնց այդ «մայր» ամբոխի ձեռքով;... Եւ առաջինը վերջնների ու նոցաբարեկամների զէնքերով, իսկ վերջններն առաջինի բարեկամների զէնքերով, և այս

զիւղացու այն զիմակաւոր և մեղ խղճուկ
թւացած ամբոխի ձեռնուվ, որը խնդում,
ուրախանում, գնահատում էր սոցա ու
«կէցցէ» թնդացնում. սոցա երեան գալուն
և լամ, հեծկլտում, տիրում, սգում ու
գովում, և նոցա մահովը: Այս, ամբոխի
ձեռքով, որը կարող է լինել և մայր, և
մահ ամեն տեսակ բարութեան, ու բռնու-
թեան:

1905—1910

Վ Ե Բ Զ

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Ուղիղ 1901 թւին, երր հայրս անդօր եղաւ
վճարելու 5 ր. 45 կ. դասագրքերի զինը և ես
ստիպւած եղայ թողնելու ուսումնարանը, մէջս
ծնւեց մի միաք՝ ինչ միջոցով շարունակել ուսու-
մըս, որ զես նոր ոսս դնելով նրա շէմքին, զիւ-
գացուն յատուկ նիւթական սղութիւնն ինձ ար-
գելում էր տիրանալ նրան:

իզուր եղան հօրս փորձերը՝ մասնաւոր
մարդկանցից պարագ վերցնելու և շարունակել տա-
լու ուսումս: Զը կորցնելով ուսման համար յոյ-
սըս, վճռեցի զիմել Հայ ազգի հարուստ և բա-
րերար կոչւած մարդկանց ու ինպրել ապահովել
զիս շարունակելու՝ գէթ ստանալու միջնա-
կարգ կրթութիւն, սակայն, ինչպէս սպասելի էր,
ամեն տեղ էլ հանդիպեցի փակ դռների. կիսատ
ուսումս շարունակելու անյաջող փորձերը և տը-
խուր մատծունքները բաւ չէին կարծես, ու հա-
սաւ 6-7 շնչի կառավարելու լուծը ևս, որոնց ա-
պրուստի միակ և միակ ազբիւըը մնացել էր մեր
աշխատանքը, և ես ստիպւած եղայ մտնելու Ան-
դրկասպեան երկրում մի առեսրական տան,
զործավարի պաշտօնով ոռնիկով կառավարելու
թէ ծերացած ծնողներիս, և թէ մոնր երեխանե-
րին: Այդ ընթացքը տեսց մօտ 6 տարի (1904—
1910) թէ ինչպէս անցան այն 6 տարին, անկարե-
լի է նկարագրել, ինչպէս և անկարելի է ասել,
որ այդ 6 տարումը եղած կլինի մի օր, որ զիւղի
միգասեան գպրոցում ստացած փոքրիկ բոցինա-
քը չլինեն զիս բորբոքած, ու այրելով ստիպած,
որ շարունակեմ ուսումս: Այդ օրւանից էլ զիս ըն-

կիրացաւ իմ անգօր զրիչը, որի կատարելագործ
 ծւելուն օփնեց Հայ մամուլն ու զբականութիւնը,
 ու նա սկսեց շարժւել վերջին երեք տարին, ո-
 րի պատուներից իր փորձեր տալիս ենք ներկայ
 երեք փոքրիկ աշխատութիւններն (Զանգակ Հա-
 յաստանի, Դիակներ և իզմիրլ. Պետերբուրգում):
 Հրատարակելով միանւագ, ու յոյս ունենալով,
 որ այն տեխնիքական թերութիւնները, որ Հայ
 ժողովուրդը կնկատի զբռոյկներիս մէջ, անցիշելի
 լը թողնի, քանի որ ունենք յոյս, որ մօտիկ ա-
 պագայում, կանհետանան զբանք բոլորը, երբ
 մենք մեր ներկայ փորձերի համար հրատարա-
 կութիւններից զոյացած արէինքով կարող ենք
 ծածկել այն տեխնիքական բացն: Ուրեմն մենք
 մեր ներկայ հրատարակութիւնները գնում ենք
 Հայ ընթերցողի առաջ, ու նրան ընդունում թէ
 քննադատի ու թէ բժշկի տեղ: Ազամեան կառէր.
 «Ապրի անկեղծ բժիշկը». և իրաւ, զբքերս քննա-
 դատողներն թէ քննադատներն ու թէ բժիշկ.
 թող նորա քննադատեն անկեղծութեամբ, բնաւ
 չիշելով կուսակցական մտքեր, կամ այն՝ թէ դեռ
 նա 19—ամեայ է, դեռ նրան հարկաւոր է շատ
 բան սովորել, քան թէ զրել, ինչպէս երբեմն
 մենք, ասում ենք մենք, իսկ Հայ ընթերցասէրը
 լինի բժիշկ ու նրա գնած զբռոյկների հասոյթով
 կարողանանք շարունակելու ու դէթ ասնելու
 միջնակարգ կրթութիւն, քանի սովորելու համար
 երբէք ուշ չէ: Կատօն 80 ատրեկան էր, երբ սկը-
 սեց սովորել յունարէն, Պետարքոս 70—80—ի
 մէջ սկսեց լատինմիրէն սովորել, և այն և այն
 ասում է Շիրակ քրացոյցը:


213

Haverhill Public Library.

This book, unless marked "Seven day book," may be kept four weeks, and, if non-fiction, may be renewed once for four weeks. If it is fiction, or on the reserve list, it may not be renewed. It may not be transferred.

If this book is kept overtime, a fine of two cents a day will be charged. If sent for by messenger, the fine and twenty cents additional will be charged.

Borrowers finding this book mutilated or defaced will please report it.



«Ազգային գրադարան»



NL0372523

61.600